



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
(Հայպատոնագիր)

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
No 1 (21)

Патентное управление Республики Армения
(Армпатент)

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված 2002 թվականի մայիսի 8-ից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	5
Գյուտի ըստ էության փորձաքննության անցկացման կարգը.....	7
ԳՅՈՒՏԵՐ	29, 125
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	31, 127
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	43, 137
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	45, 139
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	49
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	51
ՑՈՒՑԻՉՆԵՐ	109
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	113
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	142

Հրատարակվում է Հայարտոնագրի կողմից 1995թ. Издаётся Армпатентом с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. 563-258 ընդհանուր բաժին
 Հեռ. 561-126 տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

375010, Երևан, Главный проспект, Дом Правительства 3
 Тел. 563-258 общий отдел
 Тел. 561-126 отдел информационных технологий

Internet: <http://www.armpatent.org>
 E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ**CONTENTS**

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	5	LEGISLATIVE AND NORMATIVE DOCUMENTS
Порядок проведения экспертизы изобретения по существу	7	Rule of conducting substantive examination of invention
ИЗОБРЕТЕНИЯ	29, 125	INVENTIONS
Сведения о выданных патентах	31, 127	Information on granted patents
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	43, 137	UTILITY MODELS
Сведения о выданных патентах	45, 139	Information on granted patents
ТОВАРНЫЕ ЗНАКИ	49	TRADE MARKS
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	51	Information on registered trade marks and service marks
УКАЗАТЕЛИ	109	INDEXES
СООБЩЕНИЯ	113	REPORTS
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	142	TWO-LETTER CODES

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

301.0066.291100

«Ոչ պաշտոնական հրատարակություն»

Հաստատված է
Հայարտոնագրի պետի
2000թ. նոյեմբերի 29-ի
№ 66 հրամանով

Գյուտի ըստ էության փորձաքննության անցկացման կարգը

Սույն կարգը սահմանված է «Արտոնագրերի մասին» ՀՀ Օրենքի 27 հոդվածի 10-րդ կետի, ինչպես նաև ՀՀ վարչապետի 1998թ. մարտի 12-ի № 148 որոշմամբ հաստատված Հայարտոնագրի կանոնադրության 3-րդ կետի համաձայն՝ գյուտի ըստ էության փորձաքննության հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով:

Սույն կարգում օգտագործված են հետևյալ հիմնական հասկացությունները.

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
Օրենք - «Արտոնագրերի մասին» ՀՀ Օրենքը, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1999թ. հոկտեմբերի 26-ին եւ ուժի մեջ մտել 1999թ. դեկտեմբերի 16-ից

Հայարտոնագիր - ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչություն

Հայտ - գյուտի արտոնագիր ստանալու հայտ

Կոնվենցիայով հայտ – հայտ, որը ներկայացված է արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի համաձայն

Միջազգային հայտ – հայտ, որը ներկայացված է 19.07.1970թ. Արտոնագրային համագործակցության մասին (PCT) պայմանագրի համաձայն

ՄԱՀԿ – Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն

ՄԱԴ - Միջազգային արտոնագրային դասակարգում

Հայտատու - այն անձը, ում անունով խնդրարկվում է արտոնագիրը

Քվական – օր, ամիս, տարի

Կանոններ - Գյուտի արտոնագիր ստանալու հայտի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կանոններ

Կարգը - Գյուտի ըստ էության փորձաքննության անցկացման կարգը

Փորձաքննություն - Գյուտի ըստ էության փորձաքննություն

Խնդրագիր - Գյուտի ըստ էության փորձաքննության անցկացման խնդրագիր

Բովանդակություն

I. Ըստ էության փորձաքննության բովանդակությունը

II. Ըստ էության փորձաքննության անցկացման պայմանները

III. Գյուտի առաջնության թվականի սահմանումը

Կոնվենցիայով առաջնության սահմանումը

Լրացուցիչ նյութերի ստացման թվականով առաջնության սահմանումը

Նույն հայտատուի՝ ավելի վաղ ներկայացված հայտի ներկայացման թվականով առաջնության սահմանումը

Ձատված հայտով ներկայացված գյուտի առաջնության սահմանումը

Մի քանի առաջնություն սահմանելու պայմանները

Գյուտի առաջնության թվականի սահմանման լրացուցիչ պայմանների ստուգումը

IV. Գյուտի հավակնության

սահմանման ստուգումը

Գյուտի միասնության պահանջի պահպանման ստուգումը

Միջանկյալ եւ վերջնական արգասիքները Այլընտրանքները գյուտի հավակնության սահմանման մեկ կետում (Մարկուշի բանաձեւ)

V. Լրացուցիչ նյութերի ստուգումը

VI. Գյուտի

արտոնագրաունակության ստուգումը

Արդյունաբերորեն կիրառելիության ստուգումը

Տեղեկատվության որոնման անցկացումը

Տեխնիկայի մակարդակը

Տեղեկատվության որոնման բնագավառը

եւ ծավալը

Նորության ստուգումը

Գյուտարարական մակարդակի ստուգումը

VII. Բազմօղակ հավակնության

սահմանմամբ բնութագրված գյուտի արտոնագրաունակության ստուգման առանձնահատկությունները

VIII. Լրացուցիչ նյութերի

վերաբերյալ հարցում

IX. Եզրակացություն գյուտի

արտոնագրաունակության վերաբերյալ

X. Արտոնագիր տալու մասին

որոշումը

XI. Արտոնագիր տալը մերժելու

մասին որոշումը

I. Ըստ էության փորձաքննության բովանդակությունը

1. Ըստ էության փորձաքննության անցկացման ընթացքում Հայարտոնագիրը՝

1.1. Օրենքի 22 հոդվածի համաձայն սահմանում է գյուտի առաջնության թվականը, եթե դա չի սահմանվել հայտի նախնական փորձաքննության փուլում.

1.2. Կանոնների 382-405 կետերի համաձայն ստուգում է հայտատուի կողմից ներկայացված գյուտի հավակնության սահմանումը.

1.3. Կանոնների 406-420 կետերի համաձայն ստուգում է լրացուցիչ նյութերը.

1.4. Ստուգում է հայտի սկզբնական նյութերում հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով կամ հայտի քննարկման ընթացքում հաշվի առնված լրացուցիչ նյութերով բնութագրված հայտարկվող գյուտի համապատասխանությունը արտոնագրաունակության պայմաններին.

1.5. Կատարում է տեղեկատվության որոնում տեխնիկայի նախորդող մակարդակի բացահայտման նպատակով:

II. Ըստ էության փորձաքննության

անցկացման պայմանները

2. Օրենքի 27 հոդվածի համաձայն՝ ըստ էության փորձաքննությունն անցկացվում է հայտատուի կամ երրորդ անձի խնդրագրի հիման վրա:

Խնդրագիրը ընդունվում է քննարկման, եթե գյուտի հայտը, որին վերաբերում է խնդրագիրը, գտնվում է քննարկման փուլում, կամ հայտով տրված նախնական արտոնագիրը գտնվում է գործողության մեջ:

3. Խնդրագրի հետ մեկտեղ հայտատուն կամ երրորդ անձը Հայարտոնագիր է ներկայացնում գյուտի ըստ էության փորձաքննություն անցկացնելու համար սահմանված չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ: Ընդ որում, ներկայացվում է փաստաթղթի բնօրինակը (բանկային փոխանցման հանձնարարագրի բանկի դրոշմակնիքով օրինակը, կանխիկ վճարման անդորրագիրը եւ այլն): Տուրքի չափը որոշվում է՝ ելնելով հավակնության սահմանման բոլոր անկախ կետերի քանակից կամ խնդրագրում նշված անկախ կետերի քանակից:

4. Եթե հայտատուի կողմից ներկայացվել է սահմանվածից փոքր չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ, ապա հայտատուն ծանուցվում է տուրքի վճարած գումարի եւ անկախ կետերի քանակի համապատասխանեցման անհրաժեշտության մասին: Ծանուցագիրը ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտատուն պետք է նշի գյուտի այն անկախ կետերը, որոնցով անցկացվելու է փորձաքննություն կամ ներկայացնի տուրքի լրավճարման մասին փաստաթուղթ:

5. Սահմանված ժամկետում հայտատուի կողմից նշված նյութերը Հայարտոնագիր չներկայացնելու դեպքում փորձաքննությունը կատարվում է այն անկախ կետերի նկատմամբ, որոնց համար վճարված տուրքի չափը բավարար է եւ որոնք հավակնության սահմանման մեջ բերված են առաջինը, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:

6. Ըստ էության փորձաքննություն անցկացնելու խնդրագիրը հայտատուն կամ երրորդ անձը կարող են Հայարտոնագիր ներկայացնել մինչեւ հայտի ներկայացման օրվանից 7 տարին լրանալը: Խնդրագիրը կարող է ներկայացվել նաեւ նշված ժամկետի ավարտից հետո՝ 12 ամսվա ընթացքում, լրացուցիչ տուրքի վճարման պայմանով:

7. Երրորդ անձից ստացված խնդրագրի մասին Հայարտոնագիրը ծանուցում է հայտատուին:

8. Միեւնույն հայտով մի քանի խնդրագրեր ստանալու դեպքում Հայարտոնագիրը դրանցից բավարարում է այն, որը ներկայացվել է առաջինը, եթե դրանք վերաբերում են հավակնության սահմանման նույն ժամալին:

Եթե ավելի վաղ ստացված խնդրագիրը վերաբերում է հավակնության սահմանման մի մասին, ապա ավելի ուշ ստացված խնդրագրով փորձաքննությունն անցկացվում է հավակնության սահմանման այն անկախ կետերի ժամալով, որոնք նշված չէին ավելի վաղ ստացված խնդրագրի մեջ:

Հայտով ընդունված որոշման մասին ծանուցվում են խնդրագիր ներկայացրած անձինք եւ հայտատուն:

9. Հետ կանչված հայտով ըստ էության փորձաքննություն չի անցկացվում: Հետ կանչված համարված հայտով ըստ էության փորձաքննությունն սկսվում է միայն հայտով գործավարությունը վերսկսելուց հետո:

10. Գյուտի ըստ էության փորձաքննությունը Հայարտոնագիրն սկսում է հայտով նախնական փորձաքննության ավարտից անմիջապես հետո, իսկ եթե խնդրագրի ներկայացման պահին նախնական փորձաքննությունն ավարտված է՝ խնդրագրի ներկայացման օրվանից:

11. Եթե խնդրագիրը հայտատուի կողմից ներկայացվել է մինչեւ նախնական արտոնագիր

տալու մասին Հայարտոնագրի որոշման ընդունումը, ապա Հայարտոնագիրը դադարեցնում է նախնական արտոնագիր տալու գործընթացը եւ Օրենքի 27 հոդվածի համաձայն անցկացնում է ըստ էության փորձաքննություն:

Եթե նախնական արտոնագիր տալու մասին որոշումն ստանալու օրվանից 3-ամսյա ժամկետում հայտատուն չի վճարում արտոնագիր տալու համար սահմանված չափով պետական տուրքը, սակայն ներկայացնում է ըստ էության փորձաքննություն անցկացնելու խնդրագիր՝ դրան կցելով համապատասխան տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, ապա Հայարտոնագիրը դադարեցնում է նախնական արտոնագիր տալու գործընթացը եւ Օրենքի 27 հոդվածի համաձայն անցկացնում է ըստ էության փորձաքննություն:

12. Եթե համընդհանուր ժանոթացման ընթացքում երրորդ անձի կողմից ներկայացվել է խնդրագիր, ապա նախնական արտոնագիր տալու գործընթացը կարող է դադարեցվել հայտատուի համապատասխան դիմումի հիման վրա:

13. Երրորդ անձի կողմից ներկայացված խնդրագրի հիման վրա անցկացվող ըստ էության փորձաքննության ընթացքում առաջացած հարցերը նրա հետ չեն քննարկվում: Նման հարցերը քննարկվում եւ պարզվում են միայն հայտատուի հետ, իսկ երրորդ անձին ուղարկվում է փորձաքննության արդյունքներով ձեւակերպված եզրակացության պատճենը:

14. Եթե հայտը, որով ըստ էության փորձաքննությունը դեռեւս չի ավարտվել եւ նախնական արտոնագիր չի տրվել, հետ է կանչվում հայտատուի կողմից, ապա հայտով գործավարությունը դադարեցվում է, ինչի մասին ծանուցվում է խնդրագիր ներկայացնող անձը:

15. Այն դեպքում, երբ նշված ժամկետում գյուտի հայտը փոխակերպվել է օգտակար մոդելի հայտի, ապա դադարեցվում է դրա քննարկումը որպես գյուտի հայտ, ինչի մասին ծանուցվում է խնդրագիր ներկայացնող անձը:

16. Եթե խնդրագիրը հետ է կանչվում ըստ էության փորձաքննությունն սկսվելուց հետո, ապա փորձաքննությունը դադարեցվում է, իսկ վճարված տուրքի գումարը հետ չի վերադարձվում:

III. Գյուտի առաջնության թվականի

սահմանումը

17. Գյուտի առաջնությունը որոշվում է հայտը Չայարտոնագիր ներկայացնելու թվականով:

18. Գյուտի առաջնությունը կարող է որոշվել ավելի վաղ թվականով, եթե բավարարված են Օրենքի 22 հոդվածի 2-7-րդ կետերի պահանջները:

Կոնվենցիայով առաջնության սահմանումը

19. Օրենքի 22 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գյուտի առաջնությունը կարող է որոշվել առաջին հայտն արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիային մասնակից որեւէ պետություն ներկայացնելու թվականով, եթե գյուտի հայտը Չայարտոնագիր է ներկայացվել նշված թվականից 12 ամսվա ընթացքում: Կոնվենցիայով առաջնության իրավունքից օգտվելու ցանկության մասին հայտատուն պարտավոր է նշել հայտը ներկայացնելիս կամ Չայարտոնագրի կողմից այն ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում՝ կցելով առաջին հայտի պատճենը, կամ ներկայացնել այն՝ հայտը Չայարտոնագիր ներկայացնելու օրվանից 3 ամսվա ընթացքում:

20. Կոնվենցիայով առաջնություն խնդրարկելու դեպքում ստուգվում է՝

20.1. Փարիզյան կոնվենցիային մասնակից որեւէ պետություն ներկայացված առաջին հայտի վավերացված պատճենի առկայությունը: Եթե նշված պատճենը ներկայացված է հայտը Չայարտոնագիր ներկայացնելու թվականից հետո, ստուգվում է հայտատուի կողմից նշված թվականից 3- ամսյա ժամկետի պահպանումը:

20.2. Եթե առաջին հայտերը մի քանիսն են, ապա ստուգումը կատարվում է դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ առանձին:

20.3. հայտատուի կողմից առաջին հայտի ներկայացման թվականից 12- ամսյա ժամկետի պահպանումը:

20.4. կոնվենցիայով առաջնություն սահմանելու մասին դիմումը հայտը Չայարտոնագիր

ներկայացնելու թվականից 2-ամսյա ժամկետում ներկայացնելու պահանջի պահպանումը:

20.5. հայտարկված գյուտի էության բացահայտումն առաջին հայտում:

Լրացուցիչ նյութերի ստացման թվականով առաջնության սահմանումը

21. Օրենքի 22 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ առաջնությունը կարող է որոշվել լրացուցիչ նյութերի ստացման թվականով, եթե դրանցով ձեւակերպված նոր հայտը ներկայացվել է 3 ամսվա ընթացքում՝ սկսած այն ժամուցադրի ներկայացման օրվանից, որով հայտատուն տեղեկացվել է, որ սկզբնական հայտի նյութերում նկարագրված լուծման էությունը փոփոխելու պատճառով լրացուցիչ նյութերը հաշվի չեն առնվելու:

22. Լրացուցիչ նյութերի ստացման թվականով առաջնություն խնդրարկելու դեպքում ստուգվում է՝

22.1 սույն Կարգի 21-րդ կետում նշված նոր հայտ ներկայացնելու ժամկետի պահպանումը:

22.2. հայտարկված գյուտի էության բացահայտումը լրացուցիչ նյութերում, որոնց ներկայացման թվականով խնդրարկվում է առաջնությունը (հաշվի առնելով նաեւ այն սկզբնական հայտի բովանդակությունը, որով ներկայացվել են լրացուցիչ նյութերը):

Նույն հայտատուի՝ ավելի վաղ ներկայացված հայտի ներկայացման թվականով առաջնության սահմանումը

23. Օրենքի 22 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ առաջնությունը կարող է որոշվել նույն հայտատուի ավելի վաղ ներկայացրած նույն գյուտի էությունը բացահայտող հայտի ներկայացման թվականով, եթե հայտը, որով պահանջվում է այդպիսի առաջնություն, Չայարտոնագիրն ստացել է ավելի վաղ ներկայացված հայտի գրանցման օրվանից 12 ամսվա ընթացքում:

24. Նույն հայտատուի՝ ավելի վաղ ներկայացրած նույն գյուտի էությունը բացահայտող հայտի ներկայացման թվականով առաջնություն խնդրարկելու դեպքում ստուգվում է՝

24.1. սույն Կարգի 23-րդ կետում նշված 12-ամսյա ժամկետի պահպանումը.

24.2. հայտը նույն հայտատուի կողմից ներկայացված չի ներելը.

24.3. հայտարկվող գյուտի էության բացահայտված չի ներելը ավելի վաղ ներկայացված գյուտի հայտում:

25. Օրենքի 22 հոդվածի 5-րդ կետի համաձայն գյուտի առաջնությունը կարող է որոշվել ավելի վաղ ներկայացված մի քանի հայտի հիման վրա, որոնցից յուրաքանչյուրի նկատմամբ պետք է պահպանվեն վերը նշված բոլոր պահանջները:

26. Օրենքի 22 հոդվածի 6-րդ կետի համաձայն գյուտի առաջնությունը չի կարող որոշվել այն հայտի ներկայացման թվականով, որով արդեն պահանջվել է ավելի վաղ առաջնություն:

27. Ավելի վաղ ներկայացված հայտի ներկայացման թվականով առաջնություն խնդրարկելու դեպքում ավելի վաղ ներկայացված հայտը համարվում է հետ կանչված, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:

Չատված հայտով ներկայացված գյուտի առաջնության սահմանումը

28. Օրենքի 22 հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ զատված (սկզբնական հայտից առանձնացված) հայտով ներկայացված գյուտի առաջնությունը որոշվում է սկզբնական հայտի ստացման թվականով, եթե՝

28.1. զատված հայտը ներկայացվել է մինչև սկզբնական հայտով արտոնագիր չտալու մասին որոշման ընդունումը, որի վիճարկման հնարավորություններն ամբողջովին սպառված են, իսկ արտոնագիր տալու մասին որոշման դեպքում՝ ոչ ուշ, քան գյուտի պետական գրանցումը.

28.2. զատված հայտով հայտարկված գյուտում էությունը բացահայտված է սկզբնական հայտում կամ առաջին հայտում, եթե այն զատված է կոնվենցիայով հայտից եւ առաջնությունը խնդրարկվում է այդ հայտի առաջնության թվականով:

28.3. Այն դեպքում, երբ հայտը զատված է այլ առաջնություն խնդրարկմամբ հայտից, քան հայտի ներկայացման թվականն է, ապա գյուտի առաջնությունը որոշվում է այլ առաջնության թվականով:

Մի քանի առաջնություն սահմանելու պայմանները

29. Եթե հայտատուն Հայարտոնագիր ներկայացված հայտով խնդրարկում է մի քանի առաջնություն, ապա այդպիսի առաջնություններից յուրաքանչյուրի համար ստուգվում է սույն Կարգի 19-28-րդ կետերում նշված համապատասխան պահանջների պահպանումը:

30. Մեկից ավելի առաջնություն սահմանվում է այն դեպքում, երբ հայտարկված է գյուտերի խումբ, որի մեջ մտնող գյուտերը նկարագրված են ներկայացված հայտին նախորդող մի քանի հայտերում:

31. Բազմակի առաջնություն սահմանվում է նաեւ այն դեպքում, երբ գյուտը բնութագրված է այլընտրանքի տեսքի հատկանիշով(ներով) (օրինակ, Մարկուշի բանաձեւը), ինչպես նաեւ որեւէ մեծության արժեքների միջակայքի տեսքով:

32. Գյուտերի խմբի յուրաքանչյուր գյուտի առաջնությունը կամ այն գյուտի առաջնությունը, որը բնութագրված է ներկայացված այլընտրանքներից որեւէ մեկով կամ ներկայացված միջակայքի որեւէ արժեքով (կամ արժեքների տիրույթով) կարող է սահմանվել դրան նախորդող հայտի ներկայացման թվականով, որտեղ դա նկարագրված է:

33. Մասնակի առաջնություն կարող է սահմանվել այն դեպքում, երբ գյուտերից մի քանիսը նկարագրված են նախորդող հայտում (երում), իսկ մնացածը՝ առաջին անգամ նոր ներկայացված հայտում: Այս դեպքում ավելի վաղ առաջնություն սահմանվում է միայն այն գյուտերի համար, որոնք նկարագրված են նախորդող հայտում(երում):

34. Եթե հավակնության սահմանման անկախ կետում կամ անկախ եւ կախյալ կետերում բնութագրված գյուտերի համար ներկայացման տարբեր թվականներ ունեցող երկու (կամ ավելի) առաջին հայտերի հիման վրա կոնվենցիայով խնդրարկվում են տարբեր առաջնություններ, ապա սույն Կարգի 20-րդ կետով սահմանված պահանջների համապատասխանության նպատակով, ստուգվում են երկու (կամ ավելի) առաջին հայտերի վավերացված պատճենների առկայու-

թյունը եւ այդ հայտերի ներկայացման թվականի նկատմամբ 12 ամսվա ժամկետի պահպանումը:

35. Անկախ եւ կախյալ կետերում բնութագրված յուրաքանչյուր գյուտի էության բացահայտումը ստուգվում է այն առաջին հայտի նկատմամբ, որի ներկայացման թվականով խնդրարկվում է տվյալ գյուտի առաջնությունը:

Գյուտի առաջնության թվականի սահմանման լրացուցիչ պայմանների ստուգումը

36. Սույն Կարգի 21-28-րդ կետերի համաձայն առաջնության սահմանման պայմանների պահպանումը ստուգելիս պետք է համոզվել, որ Չայարտոնագիր ներկայացված հայտը, որի հիման վրա խնդրարկվում է առաջնություն, կամ որի համար ներկայացված են այդպիսի խնդրագրի հիմք հանդիսացող լրացուցիչ նյութեր, հետ կանչված չի ճանաչված կամ չի համարվում այդպիսին:

37. Խնդրարկվող առաջնության սահմանման պայման հանդիսացող ժամկետները հաշվարկվում են հետեւյալ կերպ.

37.1. Եթե ժամկետը արտահայտված է «...ժամանակամիջոցում», «ոչ ուշ», «մինչեւ լրանալը», «...թվականից...» բառերով, ապա դրա հաշվարկն սկսվում է նշված թվականին հաջորդող օրվանից:

37.2. Եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային է, ապա ժամկետի ավարտը համարվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

37.3. Եթե ժամկետն ավարտվում է այնպիսի ամսում, որը չունի համապատասխան ամսաթիվը, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

38. Խնդրարկվող առաջնության հիմք հանդիսացող ավելի վաղ ներկայացված նյութերում (հայտում, լրացուցիչ նյութերում) հայտարկված գյուտի բացահայտման պահանջի պահպանումը պարզելու համար ստուգվում է՝

38.1. արդյո՞ք այդ նյութերում նշված են հայտարկված գյուտի հավակնության սահմանման բոլոր հատկանիշները, եւ արդյո՞ք դրանք միայն գովազդային բնույթ չեն կրում.

38.2. արդյո՞ք գյուտը այդ նյութերում բացահայտված է իրագործման համար բավարար լիվությունը: Կոնվենցիայով առաջնության խնդրարկման դեպքում տվյալ պայմանը ստուգելիս հայտատուին կարող է առաջարկվել ներկայացնել առաջին հայտի թարգմանությունը:

39. Եթե առաջնության ստուգման ընթացքում ի հայտ եկած հարցերը չեն խոչընդոտում հայտի փորձաքննության անցկացմանը, ապա դրանք պարզվում են հայտի քննարկման հետ կապված այլ հարցերի հետ միասին:

40. Եթե հայտատուն պահպանել է սույն Կարգի 19-35-րդ կետերում նշված բոլոր պահանջները, ապա հայտարկված գյուտի համար սահմանվում է խնդրարկված առաջնությունը:

40.1. Եթե հայտատուի կողմից չի պահպանված սույն Կարգի 19-35-րդ կետերում նշված պահանջներից առնվազն մեկը, ապա գյուտի առաջնությունը սահմանվում է հայտը Չայարտոնագիր ներկայացնելու թվականով, ինչի մասին հայտատուն նախապես ծանուցվում է:

40.2. Եթե նշված պահանջները չեն պահպանված որեւէ գյուտի նկատմամբ, որը, օրինակ, բնութագրված է բազմօղակ հավակնության սահմանման կետերից որեւէ մեկում, ապա միայն այս գյուտի համար է առաջնությունը սահմանվում հայտը Չայարտոնագիր ներկայացնելու թվականով:

41. Այն դեպքում, երբ առաջնության թվականը սահմանելուց հետո հայտատուն ներկայացնում է փոփոխված հավակնության սահմանում, կատարվում է խնդրարկված առաջնության սահմանման հիմքերի կրկնակի ստուգում:

IV. Գյուտի հավակնության սահմանման ստուգումը

42. Ստուգումն անցկացվում է գյուտի սկզբնական կամ առաջին հայտի հավակնության սահմանման նկատմամբ, իսկ եթե Օրենքի 23 հոդվածի 7-րդ կետի համաձայն այն փոփոխվել է հայտատուի կողմից, ապա՝ նաեւ հավակնության սահմանման փոփոխված մասի նկատմամբ՝ միասնության պահանջի պահպանման պայմանով:

43. Եթե հայտի նախնական փորձաքննության ընթացքում պարզվում է, որ այն ներկայացված է միասնության պահանջի խախտմամբ, եւ մինչեւ ըստ էության փորձաքննության անցկացման սկիզբը հայտատուն երկամսյա ժամկետում հայտնում է, թե ո՞ր գյուտը (գյուտերը) ներկայացված հայտի շրջանակներում ենթակա է (են) քննարկման, ապա ստուգումն անցկացվում է այդ գյուտի (գյուտերի) հավակնության սահմանման նկատմամբ:

44. Միասնության պահանջի խախտման մասին Հայաստանի ժամուցումը նշված ժամկետում հայտատուի կողմից անպատասխան թողնելու դեպքում քննարկվում է այն գյուտը, որը հավակնության սահմանման մեջ բերված է առաջինը:

45. Ստուգման ընթացքում պարզվում է հայտարկվող գյուտի հավակնության սահմանման մեջ էական հատկանիշների առկայությունը, որոնց համախմբությունը բավարար է հայտատուի նշած տեխնիկական արդյունքն ստանալու համար: Ընդ որում, տեխնիկական արդյունքի նկատմամբ հասարակական պահանջի գոյություն ունենալը չի ստուգվում:

46. Եթե որոշվում է, որ հավակնության սահմանման անկախ կետը չի պարունակում գյուտի նկարագրությունում կամ կախյալ կետում բացահայտված էական հատկանիշ(ներ)ը, որի բացակայության դեպքում հասանելի չէ տեխնիկական արդյունքը, ապա հայտատուին առաջարկվում է դա (դրանք) մտցնել հավակնության սահմանման անկախ կետի մեջ: Ընդ որում, բերվում են փաստարկներ, որոնք ապացուցում են տեխնիկական արդյունքի ստացման համար դրա անհրաժեշտությունը:

47. Եթե հավակնության սահմանումը բացի էական հատկանիշներից պարունակում է ոչ էական հատկանիշներ կամ հատկանիշներ, որոնք բնութագրում են հայտարկված գյուտի օգտագործման կամ իրագործման մասնավոր ձեւերը, ապա կարելի է պահանջել հայտատուի կարծիքը հավակնության սահմանման այդպիսի խմբագրության պահպանման նպատակահարմարության վերաբերյալ:

48. Գյուտի հավակնության սահմանման ստուգումը ներառում է հավակնության սահման-

ման հատկանիշների նույնականացման հնարավորության որոշումը՝ Կանոնների 137-144-րդ կետերին համապատասխան:

49. Եթե պարզվում է, որ հատկանիշի նույնականացման համար անհրաժեշտ է գյուտի նկարագրության հիման վրա ճշգրտել դրա բնութագրումը, ապա հայտատուին առաջարկվում է ճշգրտել այն:

50. Եթե հատկանիշի նույնականացման հնարավորության պայմանը պահպանված է, բայց դրա բնութագրման համար օգտագործված են տերմիններ, որոնք հնացած են կամ տեխնիկայի կոնկրետ բնագավառում ընդունված չեն, հայտատուին կարելի է առաջարկել համապատասխան ճշգրտում մտցնել գյուտի հավակնության սահմանման մեջ:

51. Եթե պարզվում է, որ հատկանիշը բնութագրված է այնպիսի հասկացություններով, որոնք չեն ապահովում դրա նույնականացման հնարավորությունը եւ հայտատուն հրաժարվում է ճշգրտել գյուտի հավակնության սահմանումը, ապա հայտի հետագա քննարկման ընթացքում այդպիսի հասկացությունները հաշվի չեն առնվում:

52. Գյուտի հավակնության սահմանման ստուգման ընթացքում պարզվում է՝ արդյո՞ք գյուտի նկարագրությունը պարունակում է բոլոր այն հասկացությունները, որոնք բնութագրում են գյուտը:

53. Եթե բացահայտվում են այնպիսի հասկացություններ, որոնք հայտատուն օգտագործում է հավակնության սահմանման հատկանիշների բնութագրման համար, բայց դրանք բացակայում են գյուտի նկարագրության մեջ, ապա հայտատուն ծանուցվում է, որ ներկայացված հավակնության սահմանումը հիմնված չէ նկարագրության վրա, եւ առաջարկվում է այդ հասկացությունները ներգրավել նկարագրության մեջ (եթե հայտատուն կարեւորում է դրանց պահպանումը հավակնության սահմանման մեջ), կամ հանել այդ հասկացությունները գյուտի նկարագրությունից:

54. Եթե հայտում բերված է միօղակ կամ մեկ անկախ կետով բազմօղակ հավակնության սահմանում, ապա ստուգվում է՝ արդ՞ո՞ք այդպիսի հավակնության սահմանման մեջ բնութագրված է մեկ գյուտ:

55. Եթե պարզվում է, որ խախտված են նշված պահանջները, ապա հայտատուին ուղարկ-

վում է հարցում՝ այդ խախտումները վերացնելու եւ հավակնության սահմանումը ճշգրտելու առաջարկությամբ: Ընդ որում, հայտատուն ծանուցվում է նաեւ ճշգրտված հավակնության սահմանման մեջ միասնության պահանջը չխախտելու անհրաժեշտության մասին, ինչպես նաեւ ճշգրտելուց հրաժարվելու դեպքում քննարկման ենթակա գյուտը նշելու անհրաժեշտության մասին:

56. Եթե հատկանիշը բնութագրելու համար հայտատուն չի պահպանում այլընտրանքային հասկացությունների կիրառման պայմանները, ապա նա ծանուցվում է կատարված խախտման բնույթի մասին, նշելով կոնկրետ այլընտրանքային բնութագրերը (բոլորը, կամ հայտատուի կողմից բերվածներից մի քանիսը), որոնց նկատմամբ բացահայտված է այդ խախտումը:

57. Եթե քիմիական միացություններին վերաբերող գյուտերում օգտագործված է Մարկուշի բանաձևը, ապա պետք է հաշվի առնել՝ արդյո՞ք գյուտի հավակնության սահմանման մեջ թվարկված միացություններն ունեն ընդհանուր հատկություններ, կամ արդյո՞ք այդ միացություններն ունեն ընդհանուր էական կառուցվածքային տարր, որը կազմում է տեխնիկայի նախորդ մակարդակի նկատմամբ դրանց տարբերիչ բնութագիրը:

58. Եթե հայտատուի կողմից առաջարկված է մի քանի անկախ կետ ունեցող բազմօղակ հավակնության սահմանում, ապա փորձաքննությունը վերլուծում է յուրաքանչյուր անկախ կետ (իր կախյալ կետերով հանդերձ՝) եւ որոշում՝ արդյո՞ք հավակնության սահմանման մեջ ընդգրկված գյուտերը ներկայացնում են միասնական գյուտարարական մտահղացում կազմող գյուտերի խումբ, անկախ առանձին կետերում, կամ այլընտրանքի ձեւով մեկ կետում այդ գյուտերի ներկայացված լինելու հանգամանքից:

59. Գյուտի միասնությունը առկա է միայն այն դեպքում, երբ հայտարկված գյուտերի միջեւ կա տեխնիկական փոխադարձ կապ, որը ներառում է մեկ կամ մի քանի միանման կամ համապատասխան «հատուկ տեխնիկական հատկանիշներ», այսինքն՝ այնպիսի հատկանիշներ, որոնք որոշում են տեխնիկայի մակարդակի մեջ գյուտերից յուրաքանչյուրի ներդրումը:

60. Եթե ստուգվում է անկախ կետերում բնութագրված գյուտերի խումբը տարբերակնե-

րին վերագրելու ճշտությունը, անհրաժեշտ է համոզվել, որ տարբերակների նշված նշանակությունները եւ տեխնիկական արդյունքները համընկնում են:

61. Տեխնիկական արդյունքների համընկնելու պայմանը խախտված չի համարվում, եթե խմբի գյուտերից յուրաքանչյուրի համար նշված է մի քանի տեխնիկական արդյունք, որոնցից համընկնող է միայն մի մասը:

62. Տեխնիկական արդյունքների համընկնելու պայմանը խախտված չի համարվում նաեւ այն դեպքում, երբ բոլոր գյուտերի տեխնիկական ընդհանուր արդյունքի բնութագրումից բացի, որեւէ մեկի ձեւակերպումը լրացուցիչ ներառում է ինչ-որ յուրատեսակ առանձնահատկություն: Օրինակ՝ «շփման նվազեցում», «շփման նվազեցում բարձր խոնավության պայմաններում»:

63. Եթե հայտատուի կողմից ներկայացված հավակնության սահմանման խախտումները արգելք չեն հանդիսանում հայտարկվող գյուտի արտոնագրաունակության ստուգմանը, ապա դրանք պարզվում են հայտի քննարկման հետ կապված այլ հարցերի հետ միաժամանակ:

64. Եթե հայտատուն իր նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա փոփոխում է գյուտի հավակնության սահմանումը, ապա գյուտի արտոնագրաունակությունը ստուգելու համար հաշվի է առնվում հավակնության սահմանումը՝ հայտատուի կողմից ներկայացված փոփոխություններով:

65. Գյուտի հավակնության սահմանման ստուգման ընթացքում պետք է ուղշադրություն դարձնել հետեւյալ հանգամանքներին՝

65.1. արդյո՞ք գյուտի անվանումը համապատասխանում է գյուտը բնութագրող հատկանիշներին: Օրինակ՝ եթե հայտարկված է «եղանակ», ապա ստուգվում է եղանակը բնութագրող հատկանիշների համախմբության առկայությունը հավակնության սահմանման մեջ.

65.2. արդյո՞ք լրացուցիչ կետերի բովանդակությունը համապատասխանում է դրանց ներկայացվող պահանջներին, այսինքն՝ արդյո՞ք այդ կետերում ներկայացված տեղեկատվությունը հանդիսանում է անկախ կետում բերված հատկանիշների համախմբության ճշգրտում կամ զարգացում, թե այդ հատկանիշները բնութագրում են գյուտի այլ առարկա.

65.3. արդյո՞ք գյուտի հավակնության սահմանման անկախ կետը չի պարունակում տարբեր տեսակի գյուտերի նկարագրություն, հաշվի առնելով, որ դրանք պետք է շարադրվեն տարբեր անկախ կետերում:

65.4. արդյո՞ք այս կամ այն հատկանիշի իրագործման տարբեր ծեւերի ներառումը գյուտի հավակնության սահմանման միեւնոյն կետում հիմնավորված է:

65.5. արդյո՞ք ֆունկցիոնալ կախում ունեցող հատկանիշների տարբեր խմբերը հանդիսանում են այլընտրանքներ, այսինքն՝ խմբեր, որոնք նկարագրում են օբյեկտի կոնկրետ բնութագիրը եւ իրականացնում միանման ֆունկցիա. օրինակ՝ եթե նկարագրվում է եղանակ, որը նախատեսում է միանման ֆունկցիայի իրականացումը A եւ B փոխկապակցված պարամետրերի զույգերով, որոնք կարող են ընդունել A^1 , B^1 , A^2 , B^2 եւ այլ նշանակություններ: Այդ զույգերը կարող են հանդիսանալ այլընտրանքներ: Չակառակ դեպքում հայտատուն կարող է ծանուցվել այն մասին, որ տվյալ առաջարկությունը կարող է ներկայացվել հավակնության սահմանման մի քանի անկախ կետերում բնութագրված գյուտերի խմբով, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է այդ պարամետրերի համակցություններից մեկը:

66. Նամակագրության ընթացքում հայտատուի կողմից ներկայացված հավակնության սահմանման ստուգմամբ պարզվում է՝ արդյո՞ք այդ հավակնության սահմանումը չի պարունակում նոր անկախ կետ, որը չի վերաբերում հայտարկված գյուտին: Օրինակ՝ եթե հայտի սկզբնական նյութերում գյուտի առարկա է «Սարքը», լրացուցիչ նյութերը չպետք է պարունակեն «Եղանակ» անկախ կետով գյուտի հավակնության սահմանում, եթե անգամ չի խախտվել միասնության պահանջը:

67. Չայտատուի կողմից ներկայացված հավակնության սահմանման տարբեր կառուցվածքների դեպքում փորձաքննությունն անցկացվում է հետևյալ կերպ՝

67.1. եթե ներկայացված հայտում գյուտի հավակնության սահմանումը կազմված է առանց անկախ կետի սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի սահմանազատման, եւ տեղեկատվության որոնման արդյունքում չեն հայտնաբերվել

նմանակներ (ապրիորի սահմանվում է, որ գյուտը համապատասխանում է արդյունաբերական կիրառելիության չափանիշին), ապա որոշում է ընդունվում հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով արտոնագիր տալու մասին:

67.2. եթե ներկայացված հայտում գյուտի հավակնության սահմանումը կազմված է առանց անկախ կետի սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի սահմանազատման եւ տեղեկատվության որոնման արդյունքում հայտնաբերվել են նորությունը եւ/կամ գյուտարարական մակարդակը չխախտող նմանակներ, որոնք հաշվի առնելու դեպքում հավակնության սահմանումը կարող է կազմվել անկախ կետի սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի սահմանազատմամբ, ապա պետք է որոշում ընդունվի հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով արտոնագիր տալու մասին, իսկ հայտնաբերված նմանակները նշվեն որոնման հաշվետվությունում:

67.3. եթե ներկայացված հայտում գյուտի հավակնության սահմանումը կազմված է առանց անկախ կետի սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի սահմանազատման եւ տեղեկատվության որոնման արդյունքում հայտնաբերվել են նորությունը եւ/կամ գյուտարարական մակարդակը չխախտող նմանակներ, բայց հարցում ուղարկելու համար առկա են այլ բավարար հիմքեր, անհրաժեշտ է այդ փաստարկների հետ մեկտեղ հայտատուին ծանուցել հավակնության սահմանման ծձգրտման հնարավորության (բայց ոչ պահանջի) մասին (եթե նկարագրության «Տեխնիկայի մակարդակը» բաժնում բացակայում են նմանակների մասին տեղեկություններ, բայց դրանց մասին տեղեկատվությունը առկա է հայտնաբերված աղբյուրներում): Եթե հայտատուն, ըստ էության պատասխանելով հարցմանը եւ չցանկանալով փոփոխել գյուտի հավակնության սահմանումը, կազմում է այն՝ անկախ կետը սահմանազատելով սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի, ապա որոշում է ընդունվում հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով արտոնագիր տալու մասին:

67.4. եթե ներկայացված հայտում գյուտի հավակնության սահմանումը կազմված է առանց անկախ կետի սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի

սերի սահմանազատման եւ տեղեկատվության որոնման արդյունքում հայտնաբերվել են նորությունը եւ/կամ գյուտարարական մակարդակը չխախտող եւ ավելի մոտ նմանակների մասին տեղեկություններ (հայտատուի կողմից ընտրված նմանակների համեմատությամբ) պարունակող տեղեկատվության աղբյուրներ, իսկ փորձաքննությունը հարցում ուղարկելու համար ունի այլ բավարար հիմքեր, ապա անրաժեշտ է այդ փաստարկների հետ մեկտեղ հայտատուին ժամուցել որոնման արդյունքում հայտնաբերված ամենամոտ նմանակների եւ հավակնության սահմանման ճշգրտման նպատակահարմարության (բայց ոչ պահանջի) մասին: Եթե հայտատուն, ըստ էության պատասխանելով, չցանկանա փոփոխել հավակնության սահմանումը, ապա որոշում է ընդունվում հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով արտոնագիր տալու մասին (եթե չկան այլ խախտումներ):

68. Արտոնագրով ընձեռված գյուտի իրավական պահպանության ժամալը որոշվում է դրա հավակնության սահմանումով, անկախ նրանից՝ սահմանազատված է անկախ կետը սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի, թե ոչ: Հավակնության սահմանման հատկանիշները կարող են նշվել ավելի տրամաբանական հաջորդականությամբ: Վերանում են դժվարությունները, որոնք առկա են հայտարկված գյուտի եւ ամենամոտ նմանակի քանակական հատկանիշների միջակայքների մասնակի համընկնելու դեպքում, այլ ընտրանքի տեսքով հատկանիշների օգտագործման դեպքում՝ այլ ընտրանքի եւ ամենամոտ նմանակի քանակական հատկանիշների միջակայքների մասնակի համընկնելու եւ այլ դեպքում: Սակայն այն դեպքերում (գյուտերի մեծամասնության համար), երբ անհրաժեշտ է զատել նորությունն ընդգծող հատկանիշները, հավակնության սահմանման մեջ սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի սահմանազատումն ավելի գերադասելի է:

Գյուտի միասնության պահանջի պահպանման ստուգումը

69. Գյուտի հայտը պետք է վերաբերի մեկ գյուտի կամ գյուտերի խմբի, որոնք կապված են միասնական գյուտարարական մտահղացմամբ:

70. Գյուտի միասնության պահանջի պահպանման ստուգումը ներառում է հայտարկ-

ված գյուտերի միջեւ տեխնիկական փոխկապվածության պարզումը, որն արտահայտվում է ընդհանուր տեխնիկական հատկանիշներով (հատկանիշների համախմբությամբ), որոնք որոշում են գյուտերից յուրաքանչյուրի ավանդը տեխնիկայի մակարդակի մեջ:

71. Վերը նշված տեխնիկական փոխկապվածությունը ոչ միշտ է ակնհայտորեն բխում հավակնության սահմանումից: Սովորաբար դա ի հայտ է գալիս հավակնության սահմանման մեջ չհիշատակված տեխնիկական արդյունքի կամ հատկության քննարկման ժամանակ:

72. Գյուտի տեխնիկական խնդրի որոշումը գյուտի միասնության պահանջի պահպանման ստուգման պարտադիր պայմանն է, այսինքն, անհրաժեշտ է որոշել՝ արդյո՞ք տեխնիկական խնդրի հայտարկված լուծումը ներկայացնում է միասնական գյուտարարական մտահղացում, թե ոչ:

73. Համապատասխան վերլուծությունն անցկացվում է հավակնության սահմանման հիման վրա, հաշվի առնելով նկարագրությունը եւ զծագրերը, եթե այդպիսիք կան:

74. Գյուտի միասնության պահանջի պահպանման ստուգումը ներառում է հետեւյալ փուլերը.

74.1. առաջին (առաջինը հիշատակված հավակնության սահմանման մեջ) գյուտի առարկայի համեմատումը գյուտի առարկային վերաբերող հայտնի տեղեկատվության աղբյուրի հետ՝ այն տեխնիկական հատկանիշները որոշելու նպատակով, որոնք սահմանում են այդ գյուտի ավանդը քննարկվող տեխնիկայի մակարդակում ամբողջությամբ.

74.2. առաջին գյուտի տեխնիկական հատկանիշների (որոնք սահմանված են առաջին փուլում) համեմատումը երկրորդ գյուտի առարկայի հետ եւ մեկ կամ մի քանի նույնանման կամ համապատասխան երկու գյուտերի միջեւ տեխնիկական փոխկապվածություն ապահովող տեխնիկական հատկանիշների առկայության կամ բացակայության որոշումը;

74.3. եթե առկա է տեխնիկական փոխկապվածությունը, արձանագրվում է միասնական գյուտարարական մտահղացման առկայությունը, հակառակ դեպքում, միասնական մտահղացումը բացակայում է:

75. Պարզ դեպքերում «համապատասխան տեխնիկական հատկանիշներ» տերմինը վերաբերում է նաև այլընտրանքային հատկանիշներին, որոնք կարող են փոխարինել մեկը մյուսին: Օրինակ՝ համապատասխանությունն առկա է, եթե հավակնության սահմանման մեկ կետում առաձգականություն ապահովող տեխնիկական հատկանիշը կարող է լինել մետաղե զսպանակ, իսկ մեկ այլ կետում՝ կաուչուկից կամ այլ նյութից պատրաստված տարր:

Որոշ դեպքերում, սակայն, «համապատասխան» տերմինը կարող է օգտագործվել «լրացուցիչ», «օժանդակող», «հատուկ հարմարեցված» եւ այլ իմաստներով:

76. Տարբերակների դեպքում տեխնիկական արդյունքին պետք է հասնել միեւնույն ձեռով գյուտերի խմբի յուրաքանչյուր գյուտով:

77. Միասնության պահանջին գյուտի համապատասխանության գնահատումը կախված չէ նրանից, թե խումբ կազմող գյուտերը ներկայացված են տարբեր կետերում, կամ մեկ կետում՝ որպես այլընտրանք:

78. Գյուտի կետերի շարադրման հաջորդականությունը չի կարող ազդել միասնության պահանջի խախտման փաստի որոշման վրա:

79. Գյուտի հայտը մեկ դասի վերաբերելու փաստը միասնության պահանջին համապատասխանության մասին չի վկայում:

Միջանկյալ եւ վերջնական արգասիքները

80. «Միջանկյալ» տերմինը նշանակում է միջանկյալ կամ սկզբնական արգասիք: Դրանք են՝ արգասիքներ, որոնց հատկությունները հնարավորություն են տալիս օգտագործել դրանք վերջնական արգասիքների արտադրությունում՝ ֆիզիկական եւ(կամ) քիմիական կերպափոխությունների միջոցով:

81. Գյուտի միասնությունը համարվում է չխախտված, եթե՝

81.1. միջանկյալ եւ վերջնական արգասիքներն ունեն միեւնույն կառուցվածքային տարրը, որի մեջ միջանկյալ եւ վերջնական արգասիքի հիմնական քիմիական կառուցվածքները նույնն են, կամ այդ արգասիքների քիմիական կառուցվածքները տեխնիկապես սերտ փոխկապված են,

ընդ որում, միջանկյալ արգասիքի կառուցվածքը ներառված է վերջնական արգասիքի կառուցվածքի մեջ էական կառուցվածքային տարրի ձեւով, եւ

81.2. միջանկյալ եւ վերջնական արգասիքները տեխնիկապես փոխկապված են այնքանով, որքանով վերջնական արգասիքն ստացվում է անմիջականորեն միջանկյալ արգասիքից, կամ վերջինից անջատվում է այլ միջանկյալ արգասիքների միջոցով, որոնք ունեն նույնական էական կառուցվածքային տարր:

82. Գյուտի միասնությունը խախտված չէ նաեւ, եթե ներկայացված են միջանկյալ եւ չպարզված կառուցվածքով վերջնական արգասիքներ, օրինակ՝ չպարզված կառուցվածքով միջանկյալ արգասիք եւ չպարզված կառուցվածքով վերջնական արգասիք:

83. Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է ցույց տալ, որ միջանկյալ եւ վերջնական արգասիքները տեխնիկապես նույնն են, օրինակ՝ միջանկյալ արգասիքը, ինչպես եւ վերջնականը, ունի նույն էական տարրը, կամ այն ներմուծված է վերջնականի մեջ:

84. Տարբեր միջանկյալ արգասիքները, որոնք վերջնական արգասիքի ստացման համար օգտագործվում են տարբեր տեխնոլոգիական պրոցեսներում, կարող են նշվել մեկ հավակնության սահմանման մեջ, եթե դրանք ունեն ընդհանուր էական կառուցվածքային տարր:

Այլընտրանքները գյուտի հավակնության սահմանման մեկ կետում (Մարկուշի բանաձեւ)

85. Այս դեպքում հավակնության սահմանման մեկ անկախ կետը համարժեք է անկախ կետերի շարքին, որը յուրաքանչյուր այլընտրանքը նկարագրում է առանձին:

86. Միասնության պահանջին գյուտի համապատասխանության գնահատման եղանակը կախված չէ խումբ կազմող գյուտերը տարբեր կետերում կամ այլընտրանքի տեսքով մեկ կետում ներկայացված լինելուց:

87. Եթե Մարկուշի բանաձեւը օգտագործվում է այլընտրանքների համար՝ քիմիական միացությունների ձեւով, ապա դրանք համարվում են նույն բնույթն ունեցող, պայմանով, որ՝

87.1 բոլոր այլընտրանքներն ունեն ընդհանուր հատկություն, կամ ակտիվություն, կամ՝

87.2. էական կառուցվածքային տարրն առկա է բոլոր այլընտրանքներում, կամ՝ եթե ընդհանուր կառուցվածքը չի կարող լինել միավորող չափանիշ, ապա բոլոր այլընտրանքները պատկանում են քիմիական միացությունների մեկ դասի, որը համարվում է այդպիսին տեխնիկայի այն բնագավառում, որին պատկանում է գյուտը:

88. Ընդհանուր կառուցվածքային տարրն առկա է բոլոր այլընտրանքներում, եթե այդ միացություններն ունեն ընդհանուր կառուցվածքային մաս, որը կազմում է դրանց համապատասխան կառուցվածքների մեծ մասը, կամ եթե միացություններում ընդհանուրը դրանց համապատասխան կառուցվածքների միայն փոքր մասն է, եւ տեխնիկայի նախորդող մակարդակի նկատմամբ այդ ընդհանուր մասը կազմում է դրանց տարբերիչ հատկանիշը:

Այդպիսի կառուցվածքային մասը կարող է ներկայացված լինել միակ բաղադրիչով կամ փոխկապված բաղադրիչների համակցությամբ:

89. «Քիմիական միացությունների այդպիսին ճանաչված դաս» բառակապակցությունը նշանակում է, որ տեխնիկայի մակարդակի իմացությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ այդ դասի անդամներն ունեն նման բնութագրեր՝ հայտարկված գյուտի համատեքստով: Այդ անդամները կարող են փոխարինվել մեկը մյուսով՝ ակնկալելով նույն տեխնիկական արդյունքը:

90. Այն փաստը, որ այլընտրանքները Մարկուշի բանաձեւում կարող են դասակարգվել տարբեր ձեւով, չի նշանակում, որ խախտված է գյուտի միասնության պահանջը:

91. Եթե այլընտրանքների առկայության պայմաններում նշվում է, որ առնվազն դրանցից մեկը, որը մտնում է Մարկուշի բանաձեւի մեջ, նոր չէ տեխնիկայի նախորդող մակարդակի նկատմամբ, փորձաքննությունը պետք է վերանայի գյուտի միասնության հարցը: Սակայն պարտադիր չէ, որ այդ վերանայումը հանգեցնի գյուտի միասնության պահանջի խախտման մասին եզրակացության:

V. Լրացուցիչ նյութերի ստուգումը

92. Հայտի փաստաթղթերի մեջ ուղղումներ կան ճշգրտումներ մտցնող լրացուցիչ նյու-

թեր (հայտատուի նախաձեռնությամբ կամ Հայարտոնագրի հարցման հիման վրա) ստանալու դեպքում ստուգվում է դրանց ներկայացման համար սահմանված ժամկետների պահպանումը հայտատուի կողմից:

Հայտատուն պետք է նշված նյութերը ներկայացնի համապատասխան հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

93. Հայտատուի նախաձեռնությամբ կամ Հայարտոնագրի հարցման հիման վրա լրացուցիչ նյութեր ստանալու դեպքում ստուգվում է՝ արդյո՞ք դրանք չեն փոփոխում հայտարկված գյուտի էությունը: Լրացուցիչ նյութերը ճանաչվում են հայտարկված գյուտի էությունը փոփոխող, եթե դրանք պարունակում են հավակնության սահմանման մեջ մտցվելու ենթակա հատկանիշներ, որոնք բացակայում էին հայտի սկզբնական նյութերում:

94. Եթե հայտի սկզբնական նյութերում գյուտի հատկանիշն արտահայտված է ընդհանուր հասկացությամբ, առանց դրա իրագործման մասնավոր ձեւերի բացահայտման, ապա լրացուցիչ նյութերում իրագործման այդպիսի ձեւի ներկայացումը վերագրվում է հավակնության սահմանման մեջ մտցվելու ենթակա հատկանիշի եւ հիմք է հանդիսանում համարելու, որ այդ լրացուցիչ նյութերը փոփոխում են հայտարկված գյուտի էությունը:

95. Այն հատկանիշները, որոնք բնութագրում են միայն նախորդող տեխնիկայի մակարդակի լուծումները (այդ թվում եւ ամենամոտ նմանակը) չեն վերաբերում հայտի սկզբնական նյութերում հայտարկված գյուտի հատկանիշներին:

96. Եթե հայտարկված գյուտը վերաբերում է հայտնի սարքի, եղանակի, նյութի կամ շտամի նոր նշանակությամբ կիրառմանը, ապա գյուտի էությունը փոփոխող հատկանիշներ են ճանաչվում այն լրացուցիչ նյութերը, որոնցում նշված են հայտի սկզբնական նյութերում բացակայող այլ նոր նշանակությամբ կամ հայտնի օբյեկտը բնութագրող այլ հատկանիշներ:

97. Լրացուցիչ նյութերը, որոնք պարունակում են հայտի սկզբնական նյութերում բացակայող հատկանիշների հետ մեկտեղ հավակնության սահմանման մեջ մտցվելու ենթակա հատկանիշներ, համարվում են էությունը փոփոխող միայն նշված հատկանիշներ ունեցող մասով:

98. Եթե փորձաքննությունը գտնում է, որ լրացուցիչ նյութերը փոփոխում են հայտարկված գյուտի էությունը, ապա հայտատուն ծանուցվում է այն մասին, թե ներկայացված լրացուցիչ նյութերից որոնք են փոփոխել գյուտի էությունը:

99. Հայտատուի կողմից ծշգրտված եւ լրացուցիչ նյութերում ներկայացված հավակնության սահմանման ստուգման ընթացքում որոշվում է կատարված փոփոխությունները հայտարկված գյուտին վերաբերելու հարցը:

100. Եթե գյուտի նշանակությունն արտացոլող առաջնային սեռային հասկացությունը փոխարինվում է մեկ այլ հասկացությամբ, ապա համարվում է, որ հավակնության սահմանումը վերաբերում է հայտարկված գյուտին, պայմանով, որ նշված հասկացությունները համարժեք են կամ կախյալ:

101. Գյուտի հավակնության սահմանման փոփոխությունը համարվում է հայտարկված գյուտին վերաբերող նաեւ հետեւյալ դեպքերում՝

101.1. գյուտի առարկայի տեսակի (սարք, եղանակ, նյութ, շտամ) նշանակության փոփոխության դեպքում, երբ նոր նշված տեսակը ավելի մեծ չափով է համապատասխանում գյուտի հավակնության առաջնային սահմանման հատկանիշների բնութագրին, քան սկզբնականը.

101.2. «կիրառում նոր նշանակությամբ» գյուտի սկզբնական հայտով հայտարկված առարկայի փոխարինումը նշված նոր նշանակությամբ առարկայով, եթե պարզվել է, որ հայտարկված առարկայի կիրառման մասին տեղեկությունները մինչեւ տվյալ գյուտի առաջնության թվականը հանրամատչելի չեն դարձել.

101.3. գյուտի սկզբնական առարկայի փոխարինումը «կիրառում նոր նշանակությամբ» գյուտի առարկայով, եթե մինչեւ առաջնության թվականը հանրամատչելի դարձած տեղեկություններից կարելի է հետեւություն անել միայն նշանակությամբ տարբերվող հայտարկված միջոցի հայտնի լինելու մասին:

101.4. Գյուտի հավակնության սահմանման փոփոխությունը, որը չի վերաբերում հայտարկված գյուտին, հաշվի չի առնվում, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:

VI. Գյուտի արտոնագրաունակության ստուգումը

102. Հայտարկվող գյուտի արտոնագրաունակության ստուգման ընթացքում որոշվում է գյուտի համապատասխանությունը արդյունաբերորեն կիրառելիության, նորության եւ գյուտարարական մակարդակի պայմաններին:

103. Այն դեպքում, երբ հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանման մեջ առկա է այլընտրանքային հասկացություններով արտահայտված հատկանիշ, արտոնագրաունակության ստուգումը կատարվում է հատկանիշների յուրաքանչյուր այն համախմբության նկատմամբ, որը ներառում այդպիսի հասկացություններից մեկը:

104. Արտոնագրաունակության ստուգման առանձնահատկությունները այն դեպքում, երբ հավակնության սահմանումը բազմօղակ է, բերված են սույն Կարգի 151-157-րդ կետերում:

105. Կոնկրետ աղբյուրում տեղեկատվության բացահայտման թվականի որոշումը կատարվում է սույն Կարգի 120-122-րդ կետերի համաձայն:

106. Հայտարկվող գյուտի արտոնագրաունակությունն ստուգելիս տեխնիկայի մակարդակի մեջ չեն ներառվում տեղեկատվության այն աղբյուրները, որոնք պարունակում են Օրենքի 5 հոդվածի 5-րդ կետում նշված տեղեկատվությունը:

107. Արտոնագրաունակության ստուգման արդյունքների հիման վրա Հայարտոնագիրը տալիս է գյուտի արտոնագրաունակության վերաբերյալ եզրակացություն:

Արդյունաբերորեն կիրառելիության ստուգումը

108. Օրենքի 5 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ գյուտը արդյունաբերորեն կիրառելի է, եթե հնարավոր է այն պատրաստել կամ օգտագործել արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության եւ այլ ոլորտներում:

109. Գյուտը օգտագործելու հնարավորությունը որոշելիս ստուգվում է հայտարկվող

գյուտի առարկայի նշանակության առկայությունը հայտի նյութերում:

110. Ստուգվում է՝ արդյո՞ք հայտի սկզբնական նյութերում նկարագրված են այն միջոցները եւ եղանակները, որոնց օգնությամբ հնարավոր է գյուտի իրագործումն այն տեսքով, որով այն բնութագրված է հավակնության սահմանման յուրաքանչյուր կետում: Հայտի նյութերում այդպիսի տեղեկությունների բացակայության դեպքում բավարար է նշված միջոցների եւ եղանակների նկարագրված լինելը մինչեւ գյուտի առաջնության թվականը հանրամատչելի դարձած տեղեկատվության աղբյուրում:

111. Անհրաժեշտ է համոզվել, որ գյուտը հավակնության սահմանման յուրաքանչյուր կետով իրականացնելիս իսկապես հնարավոր է իրագործել գյուտի՝ հայտատուի կողմից նշված նշանակությունը:

112. Անհրաժեշտ է վերլուծել նաեւ հավակնության սահմանման կախյալ կետերը, որոնք ներառում են տեղեկատվություն գյուտի իրագործման մասնավոր ձեւերի մասին: Եթե այդ տեղեկատվության հիման վրա գյուտի իրագործումն անկարելի է, փորձաքննությունը պետք է հայտատուին առաջարկի ուղղումներ մտցնել այդ կետում(կետերում), կամ հանել այդ կետը (կետերը) հավակնության սահմանումից: Եթե հայտատուն իրաժարվում է այդպիսի փոփոխություններ մտցնելուց, եզրակացություն է արվում գյուտը արդյունաբերորեն կիրառելիության պայմանին չհամապատասխանելու մասին:

113. Գյուտը արդյունաբերորեն կիրառելիության պայմանին չհամապատասխանելու մասին եզրակացություն է արվում նաեւ այն դեպքում, երբ հայտատուն իրաժարվում է հավակնության սահմանման մեջ մտցնել գյուտի բացակայող էական հատկանիշը:

114. Եթե պարզվում է, որ բոլոր նշված պայմանները գյուտի առաջնության թվականի դրությամբ պահպանվել են, գյուտը համարվում է արդյունաբերորեն կիրառելիության պայմանին համապատասխանող:

115. Եթե չի պահպանվել նշված պայմաններից նույնիսկ մեկը, եզրակացություն է արվում գյուտը արդյունաբերորեն կիրառելիության պայմանին չհամապատասխանելու մասին: Այս դեպքում կարելի է, շարադրելով համապատաս-

խան փաստարկները, հարցում հղել հայտատուին, առաջարկելով կարծիք արտահայտել այդ փաստարկների վերաբերյալ ու խմբագրել հավակնության սահմանումը (եթե փորձաքննության կարծիքով հայտի նյութերը թույլ են տալիս այնպիսի խմբագրում, որի արդյունքում նշված եզրակացությունը կարող է փոփոխվել): Ընդ որում, հարցման մեջ կարող են կոնկրետ առաջարկություններ արվել հավակնության սահմանման վերաբերյալ:

116. Եթե պարզվել է, որ գյուտը չի համապատասխանում արդյունաբերորեն կիրառելիության պայմանին, ապա նորության եւ գյուտարարական մակարդակի պայմաններին դրա համապատասխանելիության ստուգում չի կատարվում:

Տեղեկատվության որոնման անցկացումը

117. Տեղեկատվության որոնման նպատակն է՝ տեխնիկայի նախորդող մակարդակի բացահայտումը: Տեղեկատվության որոնումը կատարվում է հավակնության սահմանման հիման վրա, հաշվի առնելով նկարագրությունն ու գծագրերը եւ հավակնության սահմանման հնարավոր թույլատրելի փոփոխությունները սույն Կարգի 42-68-րդ կետերի համաձայն:

117.1. Որոնման արդյունքները գրանցվում են փորձաքննության նյութերում, եւ տեղեկատվության ի հայտ բերված յուրաքանչյուր աղբյուր գնահատվում է ըստ գյուտին առնչվելու աստիճանի:

118. Տեղեկատվության որոնում կատարելիս հայտատուի կողմից հայտի փաստաթղթերի ուղղումները, ճշգրտումները եւ փոփոխությունները նկատի են առնվում, եթե ներկայացված են Կարգի 92-101-րդ կետերի համաձայն:

119. Եթե խնդրագիր ներկայացնելու թվականի դրությամբ հայտատուն սահմանված ժամկետում չի պատասխանել միասնության պահանջի խախտման մասին ծանուցմանը, տեղեկատվության որոնումը կատարվում է այն գյուտի (ընդհանուր գյուտարարական մտահղացում կազմող գյուտի խմբի) վերաբերյալ, որը (որոնք) առաջինն է(են) նշված հավակնության սահմանման մեջ:

Տեխնիկայի մակարդակը

120. Տեխնիկայի մակարդակը ներառում է մինչև տվյալ գյուտի առաջնության թվականը աշխարհում հանրամատչելի դարձած տեխնիկայի բնագավառի լուծումների (առանձին մասերի) վերաբերյալ ցանկացած տեղեկություն:

121. Հանրամատչելի են համարվում տեղեկատվության աղբյուրի մեջ բերված տեղեկությունները, որոնց ցանկացած անձ կարող է ծանոթանալ անմիջականորեն, կամ դրանց բովանդակության մասին ծանուցվել օրինական ճանապարհով:

122. Տեխնիկայի մակարդակում տեղեկատվության աղբյուրի ընդգրկվելը որոշող թվական է համարվում՝

122.1. արտոնագրված օտարերկրյա գյուտերի կամ հրապարակված հայտերի նկարագրությունների համար՝ դրանցում նշված հրապարակման թվականը.

122.2. ՀՀ-ում արտոնագրված գյուտերի նկարագրությունների համար՝ դրանցում նշված հրապարակման թվականը.

122.3. ՀՀ-ում հրապարակված հայտերի համար՝ դրանցում նշված հրապարակման թվականը.

122.4. ՄՄՀԿ-ի կողմից հրապարակված PCT-ի հայտերի համար՝ դրանցում նշված հրապարակման թվականը.

122.5. տպագրական հրատարակությունների համար՝ դրանց լույս ընծայման թվականը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ամսվա վերջին օրը կամ հրատարակության մեջ նշված տարվա դեկտեմբերի 31-ը, եթե լույս տեսնելու թվականը համապատասխանաբար որոշվում է միայն ամսով կամ տարեթվով.

122.6. ավանդադրված ձեռագրերի, հոդվածների, տեսությունների, մենագրությունների եւ այլ նյութերի համար՝ դրանց ավանդադրման թվականը.

122.7. ձեռագրի իրավունքով հրատարակված ատենախոսությունների նյութերի եւ դրանց սեղմագրերի համար՝ գրադարան առաքելու թվականը.

122.8. մրցույթի ընդունված աշխատանքների համար՝ մրցույթի անցկացմանը վերաբերող փաստաթղթերով հաստատված ծանոթացման ներկայացնելու թվականը.

122.9. տեսողությամբ ընկալվող տեղեկատվության աղբյուրների (պլակատներ, մոդելներ, արտադրատեսակներ եւ այլն) համար՝ փաստաթղթերով հիմնավորված թվականը, որից սկսած հնարավոր է դրանց դիտումը.

122.10. ցուցահանդես ներկայացված ցուցանմուշների համար՝ փաստաթղթերով հիմնավորված թվականը, որից սկսվել է ցուցադրումը.

122.11. բանավոր զեկուցումների, դասախոսությունների, էլույթների համար՝ զեկուցման, դասախոսության, էլույթի թվականը, եթե դրանք արձանագրված են ձայնագրող սարքերով կամ սղագրված են նշված թվականին գործող՝ համապատասխան միջոցառումների անցկացման կանոններով սահմանված կարգով.

122.12. ռադիոյով, հեռուստատեսությամբ, կինոյով հաղորդագրությունների համար՝ դրանց հեռարձակման թվականը, եթե այն արձանագրված է համապատասխան տեղեկատվության կրիչի վրա նշված թվականին գործող սահմանված կարգով.

122.13. օգտագործման արդյունքում հայտնի դարձած տեխնիկական միջոցի մասին տեղեկությունների համար՝ փաստաթղթերով հիմնավորված թվականը, որից սկսած այդ տեղեկությունները դարձել են հանրամատչելի:

122.14. Տեխնիկայի մակարդակը ներառում է նաեւ Հայարտոնագիր ներկայացված հայտերով բացահայտված ավելի վաղ առաջնությամբ գյուտերի եւ օգտակար մոդելների էությունը, պայմանով, որ տվյալ հայտերը կամ դրանց հիման վրա տրված արտոնագրերը Հայարտոնագիրը կիրառարակի հետագայում:

122.15. Եթե նախորդող հայտը մինչև դրա հրապարակումը հետ է կանչվել կամ համարվել է այդպիսին, բայց հրապարակվել է՝ քանի որ պատրաստ էր հրապարակման, այդ հրապարակումը համարվում է անվավեր, ինչի մասին Հայարտոնագիրը կատարում է համապատասխան հրապարակում:

Տեղեկատվության որոնման բնագավառը եւ ծավալը

123. Որոնումն անցկացվում է Հայարտոնագրի տրամադրության տակ գտնվող, ինչպես նաեւ հանրապետության համապատասխան

գրադարաններում եղած տեղեկատվական նյութերով: Անհրաժեշտության դեպքում որոնման աշխատանքները կարող են պատվիրվել միջազգային որոնման որևէ մարմնի:

124. Որոնման խորությունը որոշվում է՝ ելնելով տեխնիկայի համապատասխան բնագավառի զարգացման ժամանակաշրջանից, բայց ոչ պակաս, քան 5 տարի:

Նորության ստուգումը

125. Օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի համաձայն գյուտը համարվում է նոր, եթե այն տեխնիկայի մակարդակի առանձին մաս չէ:

126. Գյուտի նորության ստուգումը կատարվում է հավակնության սահմանման անկախ կետի՝ գյուտը բնութագրող հատկանիշների ամբողջ համախմբության նկատմամբ:

127. Գյուտը համարվում է նորության պայմանին համապատասխանող, եթե նախորդող տեխնիկայի մակարդակում հատնաբերված է միջոց, որի հատկանիշները նույնական են հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանման բոլոր հատկանիշներին, ներառյալ գյուտի նշանակությունը բնութագրող հատկանիշները:

128. Եթե հայտարկված գյուտը վերաբերում է հայտնի սարքի, եղանակի, նյութի, շտամի նոր նշանակությամբ կիրառմանը, ապա այն չի համարվում նորության պայմանին համապատասխանող, եթե հայնաբերված է տեղեկատվության աղբյուր, որից հայտնի է հայտում նշված գյուտի նշանակությամբ սարքի, եղանակի, նյութի, շտամի կիրառումը:

129. Այն դեպքում, երբ հայտարկված գյուտի հայտնիությունը բացահայտող տեխնիկայի մակարդակից հայտնաբերված տեղեկատվության աղբյուր է հանդիսանում ավելի վաղ առաջնության թվական ունեցող հայտը, պետք է համոզվել, որ վերջինս հետ կանչված չէ, կամ չի համարվել այդպիսին:

130. Եթե բացահայտված հայտը հետ կանչված չէ եւ լրացել է Օրենքի 33 հոդվածով սահմանված հետկանչման ժամկետը, հայտարկված գյուտի փորձաքննությունը շարունակվում է:

131. Այն դեպքում, երբ բացահայտված հայտը հետ կանչված չէ, բայց չի լրացել նրա

հետկանչման ժամկետը, քննարկվող գյուտի հայտատուին հայտնվում է այդպիսի հայտի առկայության մասին (առանց հայտատուին նշելու եւ հայտի բովանդակությունը բացելու) եւ իր հայտի քննարկումը հետաձգելու անհրաժեշտության մասին մինչեւ ավելի վաղ առաջնության թվական ունեցող հայտով որոշակիության հասնելը:

132. Արտոնագիր տալը մերժելու մասին որոշման մեջ ավելի վաղ առաջնության թվական ունեցող հայտի հակադրումը թույլատրվում է միայն դրա բովանդակությանը հայտատուի ծանոթանալուց հետո, մասնավորապես այն հրապարակելու արդյունքում:

133. Եթե հայտատուն համաձայն չէ հայտի քննարկման հետաձգմանը, ապա սահմանվում է, որ հայտարկված գյուտը չի համապատասխանում նորության պայմանին:

134. Եթե պարզվել է, որ հավակնության սահմանման կախյալ կետեր ունեցող անկախ կետում բնութագրված գյուտը համապատասխանում է նորության պայմանին, կախյալ կետերի նկատմամբ տեխնիկայի մակարդակի վերլուծություն չի կատարվում:

135. Այն դեպքում, երբ հավակնության սահմանման կախյալ կետեր ունեցող անկախ կետում բնութագրված գյուտը չի ճանաչվում նոր, գյուտի հետագա քննարկումը կատարվում է սույն Կարգի 151-157-րդ կետերի համաձայն:

136. Եթե պարզվել է, որ կախյալ կետեր չունեցող հավակնության սահմանումով բնութագրված գյուտը չի համապատասխանում նորության պայմանին, հայտատուին կարող է ուղարկվել փորձաքննության փաստարկների շարադրանքով եւ դրանց վերաբերյալ իր կարծիքը ներկայացնելու առաջարկությամբ հարցում: Անհրաժեշտության դեպքում հայտատուին կարող է առաջարկվել նաեւ ներկայացնել հայտի սկզբնական նյութերի վրա հիմնված գյուտի ճշգրտված հավակնության սահմանումը:

137. Եթե պարզվել է, որ գյուտը չի համապատասխանում նորության պայմանին, ապա գյուտարարական մակարդակին դրա համապատասխանելիության ստուգում չի կատարվում:

138. Գյուտի նորությունն «արատավորող» տեղեկատվության ներկայացման ձեւը նշանակություն չունի: Այդ տեղեկատվությունը կարող է լինել տարբեր աղբյուրներում (օրինակ,

միեւնույն հաստոցի մանրամասերը կարող են նկարագրված լինել տարբեր գրքերում, աստիճաններում եւ այլն): Կարելի է միայն, որ այդ աղբյուրները պարունակեն միեւնույն առարկայի (սարքի, եղանակի եւ այլն) մասին մինչեւ գյուտի առաջնության թվականը հրապարակված տեղեկատվություն:

Գյուտարարական մակարդակի ստուգումը

139. Օրենքի 5 հոդվածի 3-րդ կետի համաձայն, գյուտն ունի գյուտարարական մակարդակ, եթե մասնագետի համար դա ակնհայտորեն չի բխում տեխնիկայի մակարդակից:

140. Մասնագետի համար գյուտը ակնհայտորեն չի բխում տեխնիկայի նախորդող մակարդակից, մասնավորապես, այն դեպքում, երբ չեն հայտնաբերվել տեխնիկական լուծումներ, որոնց հատկանիշները համընկնում են գյուտի տարբերիչ հատկանիշների հետ, կամ թեեւ այդպիսի լուծումներ հայտնաբերվել են, սակայն ապացուցված չէ դրանց հատկանիշների ազդեցության հայտնիությունը հայտատուի կողմից նշված տեխնիկական արդյունքի վրա:

141. Նշված պայմանների պահպանման ստուգումը ներառում է՝

141.1. ամենամոտ նմանակի որոշումը Կանոնների 81-րդ կետի համաձայն.

141.2. հավակնության սահմանման անկախ կետի այն հատկանիշների հայտնաբերումը, որոնցով բնութագրվում է հայտարկվող գյուտը եւ որոնցով այն տարբերվում է ամենամոտ նմանակից.

141.3. տեխնիկայի մակարդակում այնպիսի որոշումների հայտնաբերումը, որոնց էական հատկանիշները համընկնում են հայտարկվող գյուտի տարբերիչ հատկանիշների հետ:

142. Գյուտարարական մակարդակի պայմանին չեն համապատասխանում այն գյուտերը, որոնք, մասնավորապես, հիմնված են՝

142.1. որեւէ հայտնի մասով (մասերով) հայտնի միջոցի լրացման վրա, որը (որոնք) միացվում է (են) դրան հայտնի եղանակով, ապահովելով այն տեխնիկական արդյունքի ստացումը, որի նկատմամբ հաստատվում է հատկապես այդ լրացումների ազդեցությունը.

142.2. հայտնի միջոցի որեւէ մասը (մասերը) մեկ այլ հայտնի մասով փոխարինելու վրա, ապահովելով այն տեխնիկական արդյունքի ստացումը, որի նկատմամբ հաստատվում է հատկապես այդ փոխարինման ազդեցությունը.

142.3. միջոցի (տարր, գործողություն) որեւէ մասի բացառման վրա, ինչը հանգեցնում է այդ բացառված մասով պայմանավորված ֆունկցիայի վերացմանը եւ այդ բացառմամբ ակնկալվող տեխնիկական արդյունքի (պարզեցում, զանգվածի, եզրաչափի եւ նյութատարության նվազեցում, հուսալիության բարձրացում, գործընթացի տեւողության կրճատում եւ այլն) ստացմանը.

142.4. տեխնիկական արդյունքի ուժեղացման նպատակով նույնատիպ տարրերի կամ գործողությունների քանակի ավելացման վրա, ընդ որում այդ արդյունքը պայմանավորված է այդպիսի տարրերի, գործողությունների առկայությամբ.

142.5. հայտնի նյութից հայտնի միջոցի կամ դրա մասի (մասերի) պատրաստման վրա՝ հասնելով այդ նյութի հայտնի հատկություններով պայմանավորված տեխնիկական արդյունքի.

142.6. այնպիսի միջոցի ստացման վրա, որը կազմված է հայտնի մասերից, որոնց ընտրությունը եւ որոնց միջեւ կապը իրագործվում են հայտնի կանոնների, առաջարկությունների համաձայն, եւ ստացվող տեխնիկական արդյունքը պայմանավորված է միայն այդ միջոցի մասերի հայտնի հատկություններով եւ դրանց միջեւ կապով.

142.7. հայտնի սարքի, եղանակի, նյութի, շտամի նոր նշանակությամբ կիրառման վրա, եթե այդ նոր նշանակությունը պայմանավորված է դրա հայտնի հատկություններով, կառուցվածքով, կատարմամբ, եւ հայտնի է, որ հատկապես այդպիսի հատկությունները, կառուցվածքը, կատարումը անհրաժեշտ են այդ նշանակության իրագործման համար:

143. Գյուտարարական մակարդակի պահանջին համապատասխանող չեն ծանաչվում այն գյուտերը, որոնք հիմնված են քանակական հատկանիշի (հատկանիշների) փոփոխման վրա, կամ՝ փոխադարձ կապի միջոցով այդպիսի հատկանիշների ներկայացման վրա, կամ այդ կապի տեսքի փոփոխման վրա, եթե հայտնի է տեխնի-

կական արդյունքի ստացման վրա հատկանիշներից յուրաքանչյուրի ազդեցությունը, եւ այդպիսի հատկանիշների նոր նշանակությունները կամ դրանց փոխադարձ կապը կարող են ստացվել՝ ելնելով հայտնի կախվածություններից, օրինաչափություններից:

144. Գյուտարարական մակարդակի պահանջին, մասնավորապես, համապատասխանում են՝

144.1 պարզված կառուցվածքով նոր անհատական միացությունների (դաս, խումբ) ստացման եղանակները.

144.2. պարզված կառուցվածքով նոր անհատական միացությունների (դաս, խումբ) ստացման եղանակները, եթե դրանք հիմնված են տվյալ միացությունների դասի կամ խմբի համար նոր ռեակցիայի վրա, կամ՝ տվյալ միացությունների դասի կամ խմբի համար հայտնի ռեակցիայի վրա, որի անցկացման պայմանները հայտնի չեն.

144.3. առնվազն երկու հայտնի բաղադրիչներ ներառող բաղադրանյութը, ընդ որում դրանք ապահովում են սինթեզիկ ազդեցություն, որին հասնելու հնարավորությունը (այսինքն՝ երկու բաղադրիչների հատկությունները արտահայտող, սակայն այդպիսի հատկություններից առնվազն մեկի քանակական ցուցանիշները ավելի բարձր են, քան թե առանձին բաղադրիչի հատկությունների ցուցանիշները) չի բխում տեխնիկայի նախորդող մակարդակից.

144.4. ընդհանուր կառուցվածքային բանաձեւով հայտնի միացությունների խմբին պատկանող անհատական միացությունը, սակայն այն նկարագրված չէ որպես հատուկ ստացված եւ ուսումնասիրված, եւ այդ խմբի համար նոր անհայտ քանակական ու որակական հատկություններ արտահայտող (սելեկտիվ գյուտ):

145. Գյուտը չի ճանաչվում գյուտարարական մակարդակի պահանջին չհամապատասխանող դրա թվացող պարզության պատճառով եւ հայտի նյութերում տեխնիկական արդյունքի հասնելու մեխանիզմի բացահայտման պատճառով, եթե այդպիսի բացահայտումը հայտնի է դարձել ոչ թե տեխնիկայի մակարդակից, այլ հայտի նյութերից:

146. Հայտարկված գյուտի տարբերիչ հատկանիշների՝ տեխնիկական արդյունքի վրա ազդելու հայտնիությունը կարող է հաստատվել

ինչպես մեկ, այնպես էլ մի քանի տեղեկատվության աղբյուրներով: Թույլատրվում է գրավել փաստարկներ, որոնք հիմնված են տեխնիկայի կոնկրետ բնագավառից հայտնի գիտելիքների վրա, առանց նշելու տեղեկատվության որեւէ աղբյուր: Սակայն, եթե հայտատուն պնդում է նշել այդ աղբյուրը, փորձաքննությունը պետք է դա անի:

147. Տեխնիկական արդյունքի վրա տարբերիչ հատկանիշների ազդեցության հայտնիության հաստատումը չի պահանջվում, եթե այդ հատկանիշների նկատմամբ այդպիսի արդյունք չի նշվել հայտատուի կողմից կամ այն դեպքում, երբ սահմանվում է, որ իր կողմից նշված տեխնիկական արդյունքը չի ստացվել:

148. Եթե կախյալ կետեր ունեցող բազմօղակ հավակնության սահմանումով բնութագրված հայտարկված գյուտը անկախ կետի մասով ճանաչվել է գյուտարարական մակարդակի պահանջին համապատասխանող, ապա կախյալ կետերով հետագա ստուգում չի կատարվում:

149. Եթե պարզվել է, որ կախյալ կետեր ունեցող հավակնության սահմանման անկախ կետում բնութագրված գյուտը չի համապատասխանում գյուտարարական մակարդակի պահանջին, հայտի հետագա քննարկումը կատարվում է սույն Կարգի 151-157-րդ կետերի համաձայն:

150. Եթե պարզվել է, որ կախյալ կետեր չունեցող հավակնության սահմանմամբ բնութագրված գյուտը չի համապատասխանում գյուտարարական մակարդակի պահանջին, ապա հայտատուին կարող է ուղարկվել փորձաքննության համապատասխան փաստարկներով հարցում՝ առաջարկելով ներկայացնել իր (հայտատուի) նկատառումները այդ փաստարկների վերաբերյալ եւ, անհրաժեշտության դեպքում, հայտի սկզբնական նյութերի շրջանակներում ճշգրտված հավակնության սահմանումը:

VII. Բազմօղակ հավակնության սահմանմամբ բնութագրված գյուտի արտոնագրաունակության ստուգման առանձնահատկությունները

151. Եթե գյուտը բնութագրված է կախյալ կետեր ունեցող բազմօղակ հավակնության սահ-

մանումով եւ անկախ կետի վերաբերյալ արվել է արտոնագրաունակության (նորության կամ գյուտարարական մակարդակի պահանջներին համապատասխանություն) բացակայության եզրակացություն, ապա հայտատուն ծանուցվում է այդ մասին, եւ նրան առաջարկվում է արտահայտել իր կարծիքը հայտի հետագա քննարկման նպատակահարմարության վերաբերյալ, պայմանով, որ նպատակահարմարության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել ճշգրտված հավակնության սահմանումը: Այն դեպքում, երբ փորձագետին հայտնի են տեղեկատվության աղբյուրներ, որոնք կախյալ կետերի պարունակությունը անկախ կետի մեջ ներառելու դեպքում կարող են հաշվի առնվել, հայտատուն ծանուցվում է նաեւ այդ մասին:

152. Այն դեպքում, երբ պարզվել է գյուտի արտոնագրաունակությունը կախյալ կետեր ունեցող բազմօղակ հավակնության սահմանման անկախ կետի նկատմամբ, անհրաժեշտ է համոզվել, որ այդպիսի հավակնության սահմանման կախյալ կետերի հատկանիշների բնութագրումը չի հակասում հասարակության շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին:

153. Բոլոր վերը նշված պայմանների նկատմամբ ստուգման դրական արդյունքի դեպքում, կախյալ կետեր ունեցող բազմօղակ հավակնության սահմանումով բնութագրվող գյուտը ծանաչվում է արտոնագրաունակ եւ որոշում է ընդունվում հիմնական արտոնագիր տալու հնարավորության մասին:

154. Բոլոր վերը նշված պայմանների նկատմամբ ստուգման բացասական արդյունքի դեպքում, հայտատուին ուղարկվում է հարցում փորձաքննության փաստարկների մերժման նկատառումները ներկայացնելու կամ հավակնության սահմանումից այդպիսի կախյալ կետերը հանելու առաջարկությամբ:

155. Եթե հայտնաբերվել է գյուտերի խումբ, ապա արտոնագրաունակության ստուգումը կատարվում է այդ խմբի մեջ ներառվող յուրաքանչյուր գյուտի նկատմամբ: Խմբի արտոնագրաունակությունը կարող է հաստատվել միայն այն դեպքում, երբ խմբի բոլոր գյուտերը արտոնագրաունակ են: Եթե սահմանվում է, որ խմբի ոչ բոլոր գյուտերն են արտոնագրաունակ, ապա

հայտատուին հաղորդվում է դրա մասին, առաջարկվում է ներկայացնել իր կարծիքը բերված փաստարկների վերաբերյալ եւ, անհրաժեշտության դեպքում, հավակնության սահմանումից հանել այն անկախ կետերը, որոնք արտոնագրաունակ չեն, կամ ներկայացնել այդ կետերը ճշգրտված տեսքով:

156. Եթե վերը բերված դեպքերում հայտատուն ներկայացնում է փոփոխված հավակնության սահմանումը, հայտի հետագա քննարկումը կատարվում է սույն Կարգի 42-91-րդ եւ 102-150-րդ կետերի համաձայն այդ հավակնության սահմանումով բնութագրված գյուտի (գյուտերի) նկատմամբ:

157. Այն դեպքում, երբ հայտատուն, չբերելով փորձաքննության փաստարկները հերքող իր նկատառումները, պնդում է արտոնագիր տալու մասին որոշումը ընդունել իր կողմից ավելի վաղ ներկայացված հավակնության սահմանումով, հայտի հետագա քննարկումը չի կատարվում եւ որոշում է ընդունվում արտոնագիր տալը մերժելու մասին սույն Կարգի 174-179-րդ կետերի համաձայն:

VIII. Լրացուցիչ նյութերի վերաբերյալ հարցում

158. Օրենքի 23 հոդվածի 7-րդ կետի համաձայն, լրացուցիչ նյութեր, այդ թվում գյուտի ճշգրտված հավակնության սահմանում ներկայացնելու պահանջով հարցումն ուղարկվում է հայտատուին այն դեպքում, երբ այդ նյութերի բացակայության պայմաններում հնարավոր չէ անցկացնել ըստ էության փորձաքննություն եւ ընդունել որոշում:

159. Հարցման հիմք կարող են հանդիսանալ, մասնավորապես, հետեւյալ հանգամանքները՝

159.1. տուրքերի վճարման հետ կապված հարցերի պարզման անհրաժեշտությունը.

159.2. գյուտի հավակնության սահմանման ճշգրտման անհրաժեշտությունը, հաշվի առնելով դրա ստուգման արդյունքները սույն Կարգի 42-91-րդ կետերի համաձայն.

159.3. հայտարկվող գյուտի արտոնագրաունակության ստուգման առնչվող խնդիրների լուծման անհրաժեշտությունը սույն Կարգի 102-150-րդ կետերի համաձայն.

159.4. հայտարկվող գյուտի արտոնագրաունակության ստուգման արդյունքում գյուտի հավակնության սահմանման ճշգրտման անհրաժեշտությունը.

159.5. միեւնույն առաջնության թվական ունեցող արդյունաբերական սեփականության նույնական օբյեկտների քննարկման հետ կապված հարցերի լուծման անհրաժեշտությունը:

160. Կարգի 102-150-րդ կետերի համաձայն քննարկված գյուտի (գյուտերի) արտոնագրաունակությունը պարզելու դեպքում, դրա մասին հարցում է ուղարկվում հայտատուին, որին առաջարկվում է ճշգրտել հավակնության սահմանումը՝ հանելով հավակնության սահմանումից այն գյուտը(գյուտերը), որի(որոնց) նկատմամբ չի կատարվել արտոնագրաունակության ստուգում:

161. Այն դեպքում, երբ հայտատուն պնդում է գյուտի հավակնության սահմանման մեջ, որի նկատմամբ ստացվել է արտոնագրաունակության մասին եզրակացություն, ներառել ոչ նույնական կամ հայտի սկզբնական նյութերում բացակայող հատկանիշ, հայտատուին ուղարկվում է հարցում առանց այդ հատկանիշի հավակնության սահմանում ներկայացնելու առաջարկությամբ:

162. Ցանկացած հարցով փորձաքննության կողմից արտահայտված կարծիքը պետք է ամրագրվի տեխնիկական կամ իրավական բնույթի փաստարկներով: Անհրաժեշտության դեպքում հղումներ են կատարվում տեխնիկական գրականությանը, Օրենքի դրույթներին, Կանոններին, սույն Կարգին եւ այլ նորմատիվ փաստաթղթերի:

163. Այն դեպքում, երբ հարցման մեջ հղում է կատարվում տեղեկատվության աղբյուրին, պետք է նշել դրա բոլոր մատենագիտական տվյալները, որոնք անհրաժեշտ են այդ աղբյուրը հայտնաբերելու համար, ինչպես նաեւ այլ տվյալներ (էջ, պարբերություն, նկարի համար եւ այլն):

164. Հարցումը կարող է ուղարկվել հայտատուին այնքան անգամ, որքան անհրաժեշտ է հայտի քննարկման համար:

IX. Եզրակացություն գյուտի

արտոնագրաունակության վերաբերյալ

165. Ըստ էության փորձաքննության արդյունքում Հայարտոնագիրը Օրենքի 27 հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերի համաձայն տալիս է եզրա-

կացություն՝ հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով հայտարկված գյուտի՝ Օրենքի 5 հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 6-րդ կետերով սահմանված արտոնագրաունակության պայմաններին համապատասխանության վերաբերյալ, եւ 10-օրյա ժամկետում ծանուցում հայտատուին եւ երրորդ անձին, եթե ըստ էության փորձաքննությունն անցկացվել է վերջինիս խնդրագրի հիման վրա:

166. Օրենքի 27 հոդվածի 5-րդ կետի համաձայն եզրակացությանը չհամաձայնելու դեպքում հայտատուն եւ երրորդ անձը, այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում, կարող են դիմել կրկնական փորձաքննության խնդրանքով: Կրկնական փորձաքննությունն անցկացվում է դիմումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

167. Օրենքի 27 հոդվածի 6-րդ կետի համաձայն, կրկնական փորձաքննության արդյունքում Հայարտոնագիրը տալիս է երկրորդ եզրակացությունը, ինչի մասին 10-օրյա ժամկետում ծանուցվում է հայտատուն եւ երրորդ անձը, եթե ըստ էության փորձաքննությունն անցկացվել է վերջինիս խնդրագրի հիման վրա:

168. Օրենքի 27 հոդվածի 7-րդ կետի համաձայն, հայտատուի դիմումի հիման վրա, որը կարող է տրվել եզրակացությունն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում, Հայարտոնագիրը, հաշվի առնելով իր տված եզրակացությունը, համապատասխան որոշում է կայացնում արտոնագիր տալու մասին եւ 10-օրյա ժամկետում ծանուցում է հայտատուին:

169. Օրենքի 27 հոդվածի 8-րդ կետի համաձայն Հայարտոնագրի որոշմանը չհամաձայնելու դեպքում, այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում, հայտատուն իրավունք ունի բողոք ներկայացնել բողոքարկման խորհուրդ: Բողոքարկման խորհուրդը բողոքը քննարկում է այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

170. Օրենքի 27 հոդվածի 9-րդ կետի համաձայն, Հայարտոնագրի կամ բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան:

X. Արտոնագիր տալու մասին որոշումը

171. Օրենքի 27 հոդվածի 6-րդ կետի համաձայն, հայտատուի դիմումի հիման վրա, որը

կարող է տրվել եզրակացությունն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում, Հայարտոնագիրը, հաշվի առնելով իր տված եզրակացությունը, որոշում է ընդունում հիմնական արտոնագիր տալու մասին՝ կցելով հավակնության սահմանումը, եթե հայտը գտնվում է քննարկման փուլում կամ տվյալ հայտի հիման վրա տրված նախնական արտոնագիրը գտնվում է գործողության մեջ:

Եթե դիմումի ներկայացման պահին հայտը հետ կանչված է կամ համարվել է հետ կանչված, կամ տվյալ հայտի հիման վրա տրված նախնական արտոնագրի գործողությունը դադարեցված է, ապա որոշում է ընդունվում հիմնական արտոնագիր տալը մերժելու մասին:

Հայարտոնագրի ընդունած որոշումների մասին հայտատուն ծանուցվում է 10-օրյա ժամկետում:

172. Այդ դեպքում նախնական արտոնագրի գործողությունը դադարեցվում է հիմնական արտոնագիր տալու մասին պաշտոնական տեղեկությունների հրապարակման օրվանից:

173. Օրենքի 4 հոդվածի 3-րդ կետի համաձայն, հիմնական արտոնագիրը գործում է մինչև հայտը ներկայացնելու օրվանից 20 տարին լրանալը:

XI. Արտոնագիր տալը մերժելու մասին որոշումը

174. Եթե պարզվում է, որ հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով հայտարկված գյուտը չի համապատասխանում արտոնագրաունակության պայմաններից որեւէ մեկին, որոշում է կայացվում արտոնագիր տալը մերժելու մասին՝ բերելով համապատասխան փաստարկներ:

175. Եթե պարզվում է, որ մեկ անկախ կետ եւ կախյալ կետեր ունեցող բազմօղակ հավակնության սահմանումով բնութագրված հայտարկված գյուտը անկախ կետի մասով չի համապատասխանում արտոնագրաունակության պայմաններից որեւէ մեկին, իսկ հայտատուն հրաժարվում է ճշգրտել այդ կետը, ապա որոշում է ընդունվում արտոնագիր տալը մերժելու մասին:

176. Եթե պարզվում է, որ մեկ անկախ կետ եւ կախյալ կետեր ունեցող բազմօղակ հավակնության սահմանումով բնութագրված հայտարկված գյուտի անկախ կետը համապատասխանում է արտոնագրաունակության պայմաններին, իսկ կախյալ կետերում պարունակվող գյուտի բնութագրումը խոչընդոտում է հայտատուի կողմից նշված գյուտի նշանակության իրականացմանը, կամ էլ հակասում է հասարակական շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին, իսկ հայտատուն հրաժարվում է ճշգրտել կամ հավակնության սահմանումից հանել այդ կախյալ կետերը, ապա որոշում է ընդունվում արտոնագիր տալը մերժելու մասին:

177. Այն դեպքում, երբ հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումն ունի մեկ անկախ կետ եւ այն չի ներառում նկարագրության մեջ առկա գյուտի էական հատկանիշը, ինչի արդյունքում գյուտը չի համապատասխանում արտոնագրաունակության որեւէ պայմանին, եւ հայտատուն հրաժարվում է մտցնել այդ հատկանիշը հավակնության սահմանման մեջ, որոշում է ընդունվում արտոնագիր տալը մերժելու մասին:

178. Եթե պարզվում է, որ հավակնության սահմանման մեջ բնութագրված հայտարկված գյուտերի խմբից որեւէ մեկը արտոնագրաունակ է, եւ հայտատուն հրաժարվում է ճշգրտել կամ հավակնության սահմանումից հանել այդ գյուտի բնութագրումը, կայացվում է արտոնագիր տալը մերժելու մասին որոշում: Ընդ որում, որոշման մեջ հաստատվում է խմբի մյուս գյուտի (գյուտերի) արտոնագրաունակությունը:

179. Հայտատուն լրացուցիչ ծանուցվում է այն մասին, որ բերված փաստարկներին չհամաձայնելու դեպքում, արտոնագիր տալը մերժելու մասին որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում, նա իրավունք ունի դիմում ներկայացնել կրկնական փորձաքննություն անցկացնելու մասին:

Գրանցված է
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
09.01.2001թ., №30101012

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
 - 13 *փաստաթղթի տեսակի կոդը*
 - A1 *Գյուտի հիմնական արտոնագիր*
 - A2 *Գյուտի նախնական արտոնագիր*
 - B2 *Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
 - 21 *հայտի համարը*
 - 22 *հայտի ներկայացման թվականը*
 - 23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
 - 24 *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
 - 31 *առաջնային հայտի համարը*
 - 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
 - 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
 - 42 *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
 - 44 *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
 - 45 *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
 - 51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
 - 54 *գյուտի անվանումը*
 - 56 *տեղեկատվության աղբյուրներ*
 - 57 *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
 - 62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
 - 65 *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
 - 71 *հայտատուն, երկրի կոդը*
 - 72 *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
 - 73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
 - 74 *արտոնագրային հավատարմատար*
 - 85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
 - 86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
 - 87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*
-


Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51)⁷ **A01N 25/32** (11) **1078** (13) **A2**
C12N 15/01
- (21) P20010076 (22) 28.06.2001
(42) 17.07.2001
- (72) Վիլիկ Հարությունյան (AM), Տարիել Ղուչիկյան (AM), Ալիդա Ավետիսյան (AM), Իրինա Կորպակովա (RU)
- (71) Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (RU), Երևանի պետական համալսարան (AM)
- (73) Միջազգային գիտատեխնիկական կենտրոն, Մոսկվա, Լուգանսկայա 9, փ/ա 25 (RU), Երևանի պետական համալսարան, Երևան, Ալեք Մանուկյան 1 (AM)

(54) Հակամուտագենային ակտիվություն ունեցող լակտոնային օդակով թիոսեմիկարբազոններ

(57) Գյուտը վերաբերում է շրջակա միջավայրի պահպանմանը, մասնավորապես՝ հակամուտագենային միջոցներին եւ կարող է կիրառվել շրջակա միջավայրի աղտոտիչների մուտագենային պոտենցիալը նվազեցնելու համար:

Առաջարկվում են լակտոնային օդակ պարունակող թիոսեմիկարբազոններ, որոնք ունեն հետևյալ ընդհանուր բանաձևերը.



որտեղ՝ R-ը C₅H₁₁, C₅H₁₁OCH₂ կամ իզո-C₄H₉OCH₂ է:

Հայտարկվող միացությունները ստանում են համապատասխան 2-ացետոնիլ-4-տեղակալված-4-բութանոլիլների փոխազդեցությամբ թիոսեմիկարբազոնների հետ՝ ջրասպիրտային միջավայրում, քացախաթթվի ներկայությամբ:

- (51)⁷ **A23B 7/00** (11) **1079** (13) **A2**
A23B 7/03
- (21) P20010024 (22) 15.02.2001
(42) 17.05.2001
- (72) Հակոբ Բարսեղյան (AM)
- (71) Հակոբ Բարսեղյան (AM)

- (73) Հակոբ Բարսեղյան, Գյումրի, Արագածի 6-րդ քաղ. 2, բն. 11(AM)

(54) Մխտորի փոշու ստացման եղանակ

(57) Թարմ սխտորը տեսակավորում են, շերտակտրում, տաք օդի հոսքում չորացնում եռաստիճան ջերմաստիճանային ռեժիմով՝ նախնական չորացումը կատարում են 20-30°C ջերմաստիճանում, միջինը՝ 30-45°C ջերմաստիճանում, վերջնականը՝ 20-25°C ջերմաստիճանում, ապա սխտորը մանրացնում են եւ մաղում:

Պահպանվում են թարմ սխտորի որակական հատկությունները (եթերային յուղերը եւ ֆիտոնցիլները), յուրահատուկ համը եւ հոտը:

- (51)⁷ **A24D 1/04** (11) **1080** (13) **A2**
- (21) P20010093 (22) 23.02.2000
(42) 17.10.2001
- (31) 99104408 (32) 12.03.1999 (33) RU
(85) 26.07.2001
(86) PCT/RU00/00060, 23.02.2000

(72) Մեյրան Պողոսյան (AM), Սիմոն Պողոսյան (AM)

(71) Թբեքոու քրոփորեյշն լիմիթիդ (GB)

(73) Թբեքոու քրոփորեյշն լիմիթիդ (GB)

(74) Ա. Պետրոսյան

(54) Ծխելու սարք

(57) Գյուտը վերաբերում է ծխախոտի արտադրությանը, մասնավորապես, ծխավողով ծխելու սարքերին:

Ծխախոտի թղթից պատրաստված առանձին շապիկի մեջ տեղադրված է ծխախոտային ձող եւ դրան կցված՝ գլանակի չափեր ունեցող ճկուն ծխափող: Ծխափողը պատրաստված է մամլված թելքավոր նյութից եւ ծխախոտի ձողի կողմից ունի ծխափողի խողովակաձևե մասի հետ ամբողջություն կազմող գտող տարր: Չտող տարրը հոծ գլան է, որի տրամագիծը հավասար է ծխափողի խողովակաձևե մասի տրամագծին: Ծխափողի ընդհանուր երկարությունը գերազանցում է ծխախոտի ձողի երկարությանը, իսկ գտող տարրի երկարությունը առնվազն երկու անգամ փոքր է ծխախոտի ձողի երկարությունից եւ առնվազն երեք անգամ՝ ծխա-

փողի խողովակաձեւ մասի երկարությունից: Ծխախոտի ձողը ծխափողին միակցված է թղթե օղազոտով: Ծխափողի թելքավոր նյութը մամլված է այնպես, որ ապահովում է խողովակաձեւ մասի անցաթողային հատույթի վերականգնումը սեղմող բեռնվածքը հանելուց հետո, որի ազդեցության տակ խողովակաձեւ մասը լրիվ սեղմված է եղել:

Գլանաձեւ գտող տարրը ծխափողի հետ որպես մեկ ամբողջություն է միեւնույն թելքավոր նյութից պատրաստումը բացառում է ծխի անցումը ծխափող՝ առանց գտման ցիկլի, ինչպես նաեւ ծխախոտի մասնիկների թափանցումը ծխափող:

Սարքը համատեղում է գլանակների եւ գտիչով սիգարետների սպառողական հատկությունները: 6 նկ.:

(51)⁷ **A61B1/00** (11) **1081** (13) **A2**
(21) P20010088 (22) 10.07.2001
(42) 18.09.2001

(72) Սոս Սիսակյան (AM), Նիկոլայ Կրասնիկով (AM), Հմայակ Սիսակյան (AM)

(71) Սոս Սիսակյան (AM), Նիկոլայ Կրասնիկով (AM), Հմայակ Սիսակյան (AM)

(73) Սոս Սիսակյան, Երեւան, Նալբանդյան 47, բն. 5 (AM), Նիկոլայ Կրասնիկով, Երեւան, Լենինգրադյան 24, բն. 70 (AM), Հմայակ Սիսակյան, Երեւան, Նալբանդյան 47, բն. 5 (AM)

(54) **Կենդանիների սրտամկանի մեռուկի զարգացումը կանխելու եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է սրտաբանությանը, մասնավորապես՝ սրտամկանի մեռուկացման զարգացումը կանխելու եղանակներին:

Նեմբուտալով (25մգ/կգ) անզգայացված սպիտակ առնետների (ստուգիչ խումբ) սրտամկանի ադրենալինային ախտահարումը մոդելավորում են՝ ազդրային երակ ներարկելով ադրենալինիդրոքլորիդի մահացու դեղաչափ (0,5մգ/կգ), որը 5-7 րոպե անց առաջացնում է ստուգիչ կենդանիների մահը: Կենդանիների հերձման ժամանակ դիտվում են սրտի արտահայտված լիարյունություն, սրտամկանի փոքր եւ խոշոր մեռուկի փոփոխություններ, թոքաայտուց ու բազմաթիվ արյունազեղումային օջախներ:

Եթե նեմբուտալով անզգայացված առնետներին (փորձարարական խումբ) նախապես՝ մինչեւ ադրենալինիդրոքլորիդի մահացու դեղաչափերի ներարկումը, ենթարկում են թոքերի արհեստական օդափոխման արհեստական շնչառության մղման տիպի ապարատով, ապա 2 ժամվա ընթաց-

քում կենդանիների մահ չի առաջանում, եւ հերձման ժամանակ չեն նկատվում սրտի արտահայտված լիարյունություն, սրտամկանի խոշոր օջախային ախտահարում, թոքերի այտուց եւ տարածուն արյունազեղում: Դրանով ապահովվում է կենդանիների սրտամկանի մեռուկի զարգացման եւ մահվան կանխումը:

(51)⁷ **A61B 5/02** (11) **1082** (13) **A1**
(21) 98083 (22) 29.12.1998
(31) 09/004420 (32) 08.01.1998 (33) US
(42) 08.08.2000

(72) Շեյ Կապլան (IL), Յակոբ Ռիխտեր (IL)

(71) Մայքրոսենս Կարդիովասկուլյար Սիսթեմզ (1996) Լթդ. (IL)

(73) Մայքրոսենս Կարդիովասկուլյար Սիսթեմզ (1996) Լթդ. (IL)

(74) Հ. Դավթյան

(54) **Մարմնի խոռոչում տվիչի սեւեռակման սարք եւ եղանակ (տարբերակներ)**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային եւ կարող է օգտագործվել մարմնի հետազոտվող հատվածում ֆիզիկական, քիմիական եւ /կամ ֆիզիոլոգիական պարամետրերի դիտման համար:

Սարքն ունի տվիչի ամրակցման միջոց, որը կոշտ ամրակցված է սեւեռակման միջոցին: Սեւեռակման միջոցը խոռոչում սեւեռակում են, օրինակ, ընդարձակման, սոսնձման կամ այլ եղանակով: Սեւեռակման միջոցը կարող է լինել, օրինակ, ստենտը, որն ունի տվիչի ամրակցման միջոց: Ներդրման ժամանակ վնասվելուց պաշտպանելու համար տվիչը ծածկում են պաշտպանիչ շերտով: Սեւեռակման միջոցը կարող է ներդրվել միջամտության կամ առանձին գործողությամբ:

Առաջարկված է նաեւ սեւեռակման միջոցի պատրաստման եղանակ:

Բարձրացվում է տվիչի ներդրման եւ խոռոչում սեւեռակման հուսալիությունը, հնարավորություն է ստեղծվում որպես սեւեռակման միջոց օգտագործել տարբեր ֆունկցիոնալ նշանակություն ունեցող սարքեր: 14 անկախ կետ: 9 նկար:

(51)⁷ **A61B 17/00** (11) **1083** (13) **A2**
(21) P20010091 (22) 19.07.2001
(42) 16.08.2001

(72) Հովհաննես Սարուխանյան (AM), Մուշեղ Միլիջանյան (AM), Անդրանիկ Օհանյան (AM)

- (71) Հովհաննես Սարուխանյան (AM), Մուշեղ Միրիջանյան (AM), Անդրանիկ Օհանյան (AM)
- (73) Հովհաննես Սարուխանյան, Երեւան, Կոմիտասի 14, բն. 27 (AM), Մուշեղ Միրիջանյան, Երեւան, Ազատության 7բ, բն. 85 (AM), Անդրանիկ Օհանյան, Երեւան, Ավանեսովի 2-րդ նրբ. 4, բն. 31 (AM)

(54) Տասներկուամսայա աղու թափածակված խոցի ժամանակ խոցային ներսփռանքի հեռացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ որովայնային վիրաբուժությանը:

Տասներկուամսայա աղու թափածակված խոցի ժամանակ, հիվանդի առողջ հյուսվածքի սահմաններում կատարում են լայնական ուղղությամբ երկու կիսալուսնաձև կտրվածքով հատում եւ բորբոքային ներսփռանքի հեռացում: Ապա հարստամոքսաէրային առողջ հյուսվածքները՝ լայնական ուղղությամբ, կարում են չներծծվող թելերով, երկշերտ հանգուցակարերով: Ընդ որում, կարերի առաջին շարքը դնում են՝ վերցնելով պատի բոլոր շերտերը, իսկ երկրորդ շարքը՝ վերցնելով միայն շճամկանային շերտը:

Գրանով ապահովվում է բորբոքային ներսփռանքի չտարածումը ստամոքսաէրային սեղմամկանի վրա, անոթային ցանցի նվազագույն վնասումը եւ խոցի թափածակման ժամանակ՝ չփոփոխված ստամոքսաէրային սեղմամկանի պահպանումը: 4 նկար (4-րդ նկարը):

(51)⁷ **A61C 8/00** (11) **1084** (13) **A2**
 (21) P20010033 (22) 28.02.2001
 (42) 17.05.2001

- (72) Կարեն Գրիգորյան (AM)
- (71) Կարեն Գրիգորյան (AM)
- (73) Կարեն Գրիգորյան, Երեւան, Վարդանանց 5ա, բն. 352 (AM)

(54) Ատամի ինպլանտատ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես օրթոպեդիական ստոմատոլոգիական սարքերին, որոնք կիրառվում են ատամի պրոթեզները ծնոտառակներում սեւեռելու համար:

Ատամի ինպլանտատը ունի կենտրոնական անցքով հենասկանոց, որի մի ծայրը կատարված է արտաքին ցանգի ձեւով, հենասկանոցի անցքով ազատ անցնող ձող, որի մի ծայրն ունի ցանգի հետ

փոխներգործող կոնաձեւ գլխիկ, իսկ մյուս ծայրին կա պարուրակ, որին ներպտոտակված են մասնեկ եւ ատամի շապիկային մասի ամրացման կճատ: Գյուտի էությունն այն է, որ հենասկանոցի արտաքին մակերեսային կատարված է հատած կոնի ձեւով, որի փոքր հիմքում գտնվում է ցանգը: Բացի այդ, հենասկանոցի արտաքին կոնաձեւ մակերեսային կան հենասկանոցին համառանցք օղակաձեւ ելուստներ:

Ապահովվում է ինպլանտատի հուսալի սեւեռումը ծնոտառակի բնիկում անմիջապես ատամի հեռացումից հետո: 3 նկ.:

(51)⁷ **A61F 2/06** (11) **1085** (13) **A1**
 (21) 98065 (22) 23.10.1998
 (31) 08/969,576 (32) 13.11.1997 (33) US
 (42) 08.08.2000

(72) Յակոբ Ռիխտեր (IL)

(71) Մեդիմոլ Լթդ. (IL)

(73) Մեդիմոլ Լթդ. (IL)

(74) Հ. Դավթյան

(54) Մարմնի խոռոչում տեղադրվող մետաղյա ստենտ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ այն կառուցվածքներին, որոնք ներդրվում են արյունատար անոթներում կամ մարմնի այլ խոռոչներում՝ դրանք ընդլայնելու եւ/կամ բաց վիճակում պահելու համար:

Ստենտը պատրաստված է հիմնանյութից, որը ծածկված է համասեռ խտությամբ առաջին պատվածքով: Պատվածքի նյութը հիմնանյութի համեմատ ունի ռենտգենյան ճառագայթների նկատմամբ ավելի ցածր թափանցելիություն: Այլ տարրերակում ստենտն ունի երկրորդ պատվածք, որը գտնվում է հիմքի եւ առաջին պատվածքի միջեւ: Երկրորդ պատվածքը կարող է լինել խողովակի միայն առանձին մասերում: Երկճյուղված ստենտի դեպքում երկրորդ պատվածքը գտնվում է ստենտի ճյուղավորման մասում:

Ապահովվում է ստենտի ճառագայթային անթափանցելիությունը: 10 նկար:

(51)⁷ **A61F 2/06** (11) **1086** (13) **A1**
 (21) 99113 (22) 25.10.1999
 (31) 09/178 571 (32) 26.10.1998 (33) US
 (42) 08.08.2000

(72) Յակոբ Ռ-իխտեր (IL), Յոզեֆ Ֆլոմենրիխ (IL), Նատալիա Բուդիզինա (IL)

(71) Մեդիմոլ Լթդ. (IL)

(73) Մեդիմոլ Լթդ. (IL)

(74) Հ. Դավթյան

(54) Մարմնի խոռոչում տեղադրվող ստենտ եւ դրա տեղադրման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես, արյունատար անոթներ եւ մարմնի այլ խողովակաձեւ խոռոչներ ներդրվող սարքերին:

Ստենտի իրանը պատրաստված է էլաստիկ նյութից եւ գլանաձեւ է: Այն ծածկված է մետաղյա պատվածքով, որն ըստ էության կանխում է ստենտի իրանի ընդարձակումը դեպի իր ազատ վիճակի տրամագիծը, երբ այն տեղադրում են ազատ վիճակի տրամագծից փոքր տրամագծով խոռոչ: Ստենտի իրանի պատվածքը կարող է կատարվել խողովակի կամ մի շարք օղակների ձեւով: Նկարագրված է նաեւ ստենտի՝ մարմնի խոռոչ տեղադրման եղանակը:

Ապահովվում է ստենտի ամրության եւ ծռման ու քայքայման նկատմամբ դիմադրողականության բարձրացում: 2 անկախ կետ: 4 նկ.:

- (51)⁷ A 61 F 3/02 (11) 1087 (13) A1
- (21) 99125 (22) 29.11.1999
- (31) 09/204830 (32) 03.12.1998 (33) US
- (42) 08.08.2000

(72) Յակոբ Ռ-իխտեր (IL)

(71) Մեդիմոլ Լթդ. (IL)

(73) Մեդիմոլ Լթդ. (IL)

(74) Հ. Դավթյան

(54) Կառավարվող անջատվող ստենտ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես մարմնային անոթներում ներդրվող էնդոպրոթեզներին՝ անոթները բաց վիճակում պահելու կամ անոթներում այլ էնդոպրոթեզներ ամրացնելու եւ պահելու համար:

Ստենտն ունի հատուկ նշանակված անջատման կետեր կամ տիրույթներ: Ստենտի տեղադրումից հետո նրա վրա կիրառված ճնշումը նշանակված անջատման կետերի կամ տիրույթների մոտ ստենտն անջատում է: Երբ անջատումը տեղի է ունենում ամբողջապես ստենտի շրջագծով, ստենտը բաժանվում է հատվածների, որոնցից յուրաքանչյուրն ունակ է շարժվելու անոթում ստենտի այլ

հատվածներից անկախ: Նշանակված անջատման տիրույթների մոտ մասերը կարող են անջատվել ստենտի վրա կիրառված ճնշման տակ ներդրումից հետո: Նշանակված անջատման տիրույթների մոտ մասերը կարող են պատրաստվել բավականաչափ թույլ նյութից այնպես, որ մասերը կարող են անջատվել ստենտի վրա կիրառված ճնշման տակ ներդրումից հետո: Նշանակված անջատման տիրույթների մոտ ստենտը կարող է ունենալ ավելի պակաս թվով մասեր, քան ստենտի այլ հատվածներում:

Հավակնության սահմանման 3 անկախ կետ, 5 նկար:

- (51)⁷ A61K 6/00 (11) 1088 (13) A2
- (21) P20010071 (22) 13.06.2001
- (42) 17.07.2001

(72) Արմենուհի Պետրոսյան (AM), Տիգրան Ղարազյոզյան (AM), Խաչիկ Նահապետյան (AM), Լեւոն Մատինյան (AM), Միքայել Բաբախանյան (AM), Ջոյա Մարչենկո (AM), Վիլեն Զալաբով (AM), Արմեն Նահապետյան (AM)

(71) Արմենուհի Պետրոսյան (AM), Տիգրան Ղարազյոզյան (AM)

(73) Արմենուհի Պետրոսյան, Երեւան, Սեւանի 128, բն. 10 (AM), Տիգրան Ղարազյոզյան, Երեւան, Տիտոգրադյան 14 (AM)

(54) Պարողոնտի հիվանդությունների կանխարգելման եւ/կամ բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային, մասնավորապես, պարողոնտի բորբոքային հիվանդությունների կանխարգելման եւ/կամ բուժման եղանակներին:

Ֆիտոպատրաստուկով, որն իրենից ներկայացնում է մատուտակ մերկի (*Glycyrrhiza glabra L.*) արմատի 10% ջրաթուրմը, թրջում են կաթոդային էլեկտրոդին պարուրված մանրէագերծ թանգիֆը, տեղադրում էլեկտրոդը լնդի վրա եւ բացասական բեւեռից՝ 10 օրվա ընթացքում, օրական մեկ անգամ 10 րոպե տեսողությամբ ներմուծում այն: Միաժամանակ հիվանդին per os նշանակում են մատուտակ մերկի արմատի 10% ջրաթուրմը՝ ուտելուց հետո օրական 3 անգամ 1 ճաշի գդալ չափով:

Ապահովվում է պարողոնտի հիվանդությունների կանխարգելման եւ/կամ բուժման ժամկետների կրճատումը:

- (51)⁷ **A61K 7/00** (11) **1089** (13) **A2**
- (21) P20010083 (22) 04.07.2001
- (42) 17.07.2001
- (72) Արմենակ Համբարձումյան (AM)
- (71) Արմենակ Համբարձումյան (AM)
- (73) Արմենակ Համբարձումյան, Երևան, Կորյունի 5, բն. 65 (AM)

(54) Հակամանրէային եւ հակաբորբոքային ակտիվություն ունեցող մաշկաքսուք (տարբերակներ)

(57) Գյուտը վերաբերում է կոսմետիկայի բնագավառին, մասնավորապես, մաշկի խնամքի միջոցներին:

Առաջարկվում է մաշկաքսուք, որը ներառում է կաթնաթթվային մանրէներով մերված կաթի շիճուկ՝ հեղուկ կամ լիոֆիլիզացված վիճակներում, եւ հիդրոֆիլ հիմնանյութ:

Առաջարկվում է նաեւ մաշկաքսուք, որը ներառում է կաթնաթթվային մանրէներով մերված կաթի շիճուկ լիոֆիլիզացված վիճակում եւ լիպոֆիլ հիմնանյութ:

Որպէս կաթնաթթվային մանրէներ օգտագործված է Lactobacillus acidophilus մանրէների 317/402 շտամը:

Ապահովվում է մաշկաքսուքների հակամանրէային եւ հակաբորբոքային ակտիվության բարձրացում: 2 անկախ կետ:

- (51)⁷ **A61M 29/00** (11) **1090** (13) **A1**
- (21) 99124 (22) 29.11.1999
- (31) 09/204771 (32) 03.12.1998 (33) US
- (42) 08.08.2000
- (72) Յակոբ Ռիխտեր (IL), Գրեգորի Փինչասիք (IL)
- (71) Մեդիմոլ Լքդ. (IL)
- (73) Մեդիմոլ Լքդ.(IL)
- (74) Հ. Դավթյան

(54) Գալարածեւ ոլորված ստենտ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես, էնդոպրոթեզներին, որոնք նախատեսված են անոթները բաց պահելու կամ անոթներում այլ էնդոպրոթեզներ ամրացնելու եւ պահելու համար:

Ստենտն ունի գալարածեւ ոլորված շերտ, որը բաղկացած է առնվազն երկու կողմնային ժապավենից, որոնք ձեւավորված են օձաձեւ նախշանկարի տեսքով: Ժապավեններն իրար են միացված, օրինակ, լայնական հենակների միջոցով՝ օձաձեւ կողմերով բջիջներ առաջացնելով: Ստենտի ընդար-

ձակման ժամանակ ժապավենների ծովածքները բացվում են՝ երկարացնելով յուրաքանչյուր բջջի, հետեւաբար՝ ամբողջ շերտի, երկարությունը պտուտակային ուղղությամբ:

Ապահովվում է ստենտի ընդարձակումը առանց շերտի որեւէ նշանակալի քանդման: 7 նկար:

- (51)⁷ **A61M 37/00** (11) **1091** (13) **A1**
- (21) 99054 (22) 08.06.1999
- (31) 09/127222 (32) 31.07.1998 (33) US
- (42) 08.08.2000
- (72) Յակոբ Ռիխտեր (IL)
- (71) Ջյուլի Հոլդինգս Լքդ. (Իսրայել) (IL)
- (73) Ջյուլի Հոլդինգս Լքդ. (Իսրայել) (IL)
- (74) Հ. Դավթյան

(54) Հարմարանքը մարմնի խոռոչի տրված տեղում տեղադրելու սարք եւ եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային:

Սարքն ունի գլանաձեւ միկրոշարժիչ, որին ամրակցված է մարմնի խոռոչում տեղադրվող հարմարանքը: Շարժիչի երկայնական անցքում գտնվում է ուղղորդ լարը, որի նկատմամբ շարժիչի դիրքը փոխվում է սողալու միջոցով:

Իրականացման մեկ այլ տարբերակում շարժիչը գտնվում է ուղղորդ խողովակի ներսում: 7 անկախ կետ, 13 նկար:

- (51)⁷ **A61N 5/01** (11) **1092** (13) **A2**
- (21) P200010080 (22) 02.07.2001
- (42) 16.08.2001

(72) Սյուզաննա Աղաբեկյան(AM), Աշոտ Ծովյան (AM)
(71) Սյուզաննա Աղաբեկյան (AM), Աշոտ Ծովյան (AM)
(73) Սյուզաննա Աղաբեկյան, Երևան, Ռուբինյանց 2, բն. 7 (AM), Աշոտ Ծովյան, Երևան, Դեմիրճյան 31, բն. 25 (AM)

(54) Կենդանի օրգանիզմի լազերային ճառագայթահարման սարք

(57) Գյուտը վերաբերում է բժշկության բնագավառին եւ կարող է կիրառվել բազմաթիվ հիվանդությունների բուժման եւ կանխարգելման ժամանակ:

Սարքն ունի ճառագայթման աղբյուր, ալիքատար եւ ակտիվ կառավարման հանգույց: Ծառագայթման աղբյուրը կիսահաղորդչային լազեր է: Ակտիվ կառավարման հանգույցը, որը պարունակում է սնուցման բլոկ, միկրոպրոցեսոր եւ սենսոր, կառավարում է ճառագայթի պարամետրերը՝

ակնթարթային հզորությունը, մոդուլացման միջադադարը եւ հաճախությունը: Սարքը տեղադրվում եւ ամրացվում է հիվանդի մարմնի համապատասխան մասում: 1նկ.:

- (51)⁷ **B65D 1/00** (11) **1093** (13) **A2**
- (21) P20010043 (22) 22.03.2001
- (31) 2000107071 (32) 24.03.2000 (33) RU
- (42) 20.06.2001

(72) Ալեքսանդր Սիլոտսկին (RU), Բորիս Ազաֆոնով (RU)

(71) Օբշչեստվո ս օգրանիչեննոյ օտվետստվեննոստյու «Վոդոլեյ 2001» (RU)

(73) Օբշչեստվո ս օգրանիչեննոյ օտվետստվեննոստյու «Վոդոլեյ 2001» (RU)

(74) Հ. Դավթյան

(54) **Մթերքի բանկա եւ դրա պատրաստման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է սննդամթերք պահելու տարային եւ կարող է կիրառվել մետաղյա կափարիչով բազմաէփլենտերեֆտալատից (ԲԷՏ) փոքրաչափ տարայի պատրաստման ժամանակ:

Բանկան փշման եղանակով կաղապարված անոթ է, որն ունի իրանի եւ բլի միաձույլ կատարունով ԲԷՏ-ից պատրաստված փշովի պատյանի տեսք: Բանկայի բլի վերին մասում կա նստեցման գոտի, որն ունի Դ-աձեւ հատվածք եւ ցցուն եզրով առաջացնում է կցաշուրթ՝ կափարիչի հերմետիկ ամրակցման համար: Կափարիչն ունի C-աձեւ եզր՝ նշված գոտու Դ-աձեւ ճակատի վրա ազատ նստեցման համար: Կափարիչի եւ բլի նստեցման գոտու արտաքին տրամագծերը կազմում են պատյանի միջին մասի առավելագույն լայնության 2/3-ից ոչ պակաս:

Առաջարկված է ԲԷՏ-ից բանկայի պատրաստման եղանակ:

Բարձրացվում է բանկայի նստեցման գոտու պատրաստման ճշտությունը, կափարիչի հերմետիկ ամրակցման հուսալիությունը: 2 անկախ կետ: 11 նկ.:

- (51)⁷ **C01B 31/34** (11) **1094** (13) **A2**
- B01J 27/22**
- (21) P20010003 (22) 10.01.2001
- (42) 27.03.2001

(72) Ռազմիկ Մալխասյան (AM), Թամարա Գարիբյան (AM), Վարյա Մինասյան (AM), Սուսաննա Գրիգորյան (AM), Լեոն Վարդիկյան(AM), Ռիտա Գրիգորյան (AM)

(71) Ռազմիկ Մալխասյան (AM), Թամարա Գարիբյան (AM)

(73) Ռազմիկ Մալխասյան, Երեւան, Սոսեի 2/2, բն. 50 (AM), Թամարա Գարիբյան, Երեւան, Տերյան 57, բն. 18 (AM)

(54) **Ակտիվ նանոչափ կարբիդների ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ նանոչափ միացությունների եւ կատալիզորդների արտադրությանը:

Քվանտաքիմիական եղանակով ստացված ամորֆ մետաղի (վոլֆրամի կամ մոլիբդենի) զանգվածը (0,1-0,2գր) հեքսանի մեջ մեխանիկորեն նստեցնում են Al₂O₃ ից կրողների վրա, որոնք նախօրոք չորացման եւ ջերմամշակման են ենթարկվել 400°C ջերմաստիճանում 2 ժամվա ընթացքում: Հեքսանի հեռացումից հետո մուշը ենթարկում են կարբիդացման՝ 20% CH₄ + 80% H₂ խառնուրդի հոսքում մթնոլորտային ճնշման եւ 600°C ջերմաստիճանում 6-10 ժամվա ընթացքում: Հոսքի արագությունը 7,5-15սմ³/րոպե է:

Պարզեցվում է եւ ինտենսիվացվում ակտիվ նանոչափ կարբիդների ստացման եղանակը, մեծանում է դրա արտադրողականությունը:

- (51)⁷ **C02F 1/56** (11) **1095** (13) **A2**
- (21) P20010039 (22) 13.03.2001
- (42) 17.05.2001

(72) Գարիկ Կարապետյան (AM), Գրիգորի Այվազյան (AM), Արտակ Գրիգորյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)

(71) Գարիկ Կարապետյան (AM), Գրիգորի Այվազյան (AM), Արտակ Գրիգորյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)

(73) Գարիկ Կարապետյան, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գնդեվազ (AM), Գրիգորի Այվազյան, Երեւան, Դ. Անհաղթի 19, բն. 32 (AM), Արտակ Գրիգորյան, Երեւան, Հովհաննիսյան 4, բն. 12 (AM), Կարապետ Թահմազյան, Երեւան, Այգեստան 10, բն. 10 (AM)

(54) **Գալվանական արտադրությունների հոսքաջրերի մաքրման եղանակ**

(57) Գալվանական արտադրությունների հոսքաջրերի մեջ, որոնք պարունակում են բազմալակնոտ մետաղների իոններ, ներմուծում են 0,1-0,5 մգ/լ երկմեթիլերկալիլամոնիումի քլորիդի եւ ակրիլանիտրիլի համապոլիմերների 0,1%-անոց ջրային լու-

ծույթ՝ մոնոմերների 1:1 հարաբերակցությամբ, այնուհետև 0,5-0,9 մգ/լ նատրիումի ակրիլատի եւ ակրիլանիտրիլի համապոլիմերների 0,1%-անոց ջրային լուծույթ՝ մոնոմերների 1:1 հարաբերակցությամբ:

Ջուրը խառնում են, պարզեցնում, քամում, որից հետո սպեկտրալուսաչափական եղանակով որոշում մետաղների իոնների պարունակությունը:

Բարձրանում են հոսքաջրերի մաքրման աստիճանը եւ ինտենսիվությունը:

(51)⁷ C02F 1/58 (11) 1096 (13) A2
(21) P20010058 (22) 04.05.2001
(42) 18.07.2001

(72) Գրիգորի Այվազյան (AM), Արմեն Ստեփանյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)

(71) Գրիգորի Այվազյան (AM), Արմեն Ստեփանյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)

(73) Գրիգորի Այվազյան, Երեւան, Գավիթ Անհաղթի 18, բն. 32(AM), Արմեն Ստեփանյան, Երեւան, Կոմիտասի 42, բն. 55 (AM), Կարապետ Թահմազյան, Երեւան, Արզումանյան 16/2, բն. 26 (AM)

(54) **Կատիոնային ներկանյութերից հոսքաջրերի մաքրման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է ներկանյութերից հոսքաջրերի մաքրման եղանակներին եւ կարող է օգտագործվել տեքստիլ արդյունաբերության մեջ հոսքաջրերի մաքրման համար:

Հոսքաջրերի մշակման ժամանակ որպես ազդանյութ-նստեցուցիչ օգտագործում են 0,25-0,75գ/լ հարաբերությամբ մագնեզիումի պերքլորատ:

Եղանակը հնարավորություն է տալիս բարձրացնել մաքրման աստիճանը եւ կրճատել պարզեցման ժամանակը:

(51)⁷ C02F 1/58 (11) 1097 (13) A2
(21) P20010059 (22) 04.05.2001
(42) 18.07.2001

(72) Գրիգորի Այվազյան (AM), Արմեն Ստեփանյան (AM), Նարինե Կիրակոսյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)

(71) Գրիգորի Այվազյան (AM), Արմեն Ստեփանյան (AM), Նարինե Կիրակոսյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)

(73) Գրիգորի Այվազյան, Երեւան, Գավիթ Անհաղթի 18, բն. 32 (AM), Արմեն Ստեփանյան, Երեւան, Կոմիտասի 42, բն. 55 (AM), Նարինե Կիրակոսյան, Արտաշատ, Ա. Հակոբյան 120 (AM), Կարապետ Թահմազյան, Երեւան, Արզումանյան 16/2, բն. 26 (AM)

(54) **Կատիոնային մակերեսութասակտիվ նյութերից հոսքաջրերի մաքրման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է կատիոնային մակերեսութասակտիվ նյութերից հոսքաջրերի մաքրման եղանակներին եւ կարող է օգտագործվել տեքստիլ արդյունաբերության հոսքաջրերի մաքրման համար:

Հոսքաջրերը մշակում են $1 \times 10^{-4} - 2 \times 10^{-4}$ մոլ/լ հարաբերակցությամբ նստեցուցիչով՝ մագնեզիումի պերքլորատով:

Եղանակը հնարավորություն է տալիս կրճատել պարզեցման ժամանակը եւ նստեցուցիչի ծախսը:

(51)⁷ C02F 1/62 (11) 1098 (13) A2
(21) P20010010 (22) 19.01.2001
(42) 27.03.2001

(72) Գարիկ Կարապետյան (AM), Գրիգորի Այվազյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)

(71) Գարիկ Կարապետյան (AM), Գրիգորի Այվազյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)

(73) Գարիկ Կարապետյան, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գնդեվազ (AM), Գրիգորի Այվազյան (AM), Երեւան, Գ. Անհաղթի 18, բն. 32, Կարապետ Թահմազյան, Երեւան, Այգեստան, 10-րդ փող. 10^ա (AM)

(54) **Հոսքաջրերի՝ քրոմ (III)-ի իոններից խոր մաքրման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է արդյունաբերական հոսքաջրերի մաքրման եղանակներին, մասնավորապես՝ քրոմ (III)-ի իոններից, եւ կարող է կիրառվել մետաղամշակման արդյունաբերությունում եւ գալվանատեխնիկայում:

